*Երկրորդ ընթերցում*
*Լրամշակված նախագիծ*

*Կ-673-03.10.2023-ՊԻ-011*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## Գ Լ ՈՒ Խ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիա իրականացնող իրավասու պետական մարմնում (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ Պրոբացիայի ծառայության հիմնական սկզբունքները և խնդիրները, Պրոբացիայի ծառայություն անցնելու կարգը և Պրոբացիայի ծառայության պայմանները, Պրոբացիայի ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, պաշտոններն ու կոչումների, ծառայողների բարեվարքության համակարգի, Պրոբացիայի ծառայության հետ կապված այլ հիմնական հարաբերություններ:

2. Պրոբացիայի ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, իսկ դրանցով կարգավորված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

**Հոդված 2. Պրոբացիայի ծառայությունը**

1. Պրոբացիայի ծառայությունը ապահովում է «Պրոբացիայի մասին» օրենքով սահմանված Պրոբացիայի ծառայության գործառույթների և պրոբացիայի խնդիրների իրականացումը:

2. Պրոբացիայում ծառայողը Պրոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձն է, ով տվել է պրոբացիայի ծառայողի երդում:

## Գ Լ ՈՒ Խ 2

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

**Հոդված 3. Պրոբացիայի ծառայության համակարգը**

1. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից: Կենտրոնական մարմինը բաղկացած է հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից: Տարածքային մարմինները գործում են բաժնի կարգավիճակով:

2. Պրոբացիայի ծառայությունը իրականացվում է կենտրոնական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումների և տարածքային մարմինների կողմից:

3. Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, հաստիքացուցակը հաստատում է օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմնի ղեկավարը (այսուհետ՝ Նախարար):

4. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և կարող են ունենալ անհատականացման այլ միջոցներ:

5. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների նկարագիրը հաստատում է Նախարարը:

**Հոդված 4. Գլխավոր քարտուղարը և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները**

1. Պրոբացիայի ծառայությունը ունի գլխավոր քարտուղար: Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով:

2. Պրոբացիայի ծառայության գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է, որը  պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

3. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայությունն ընդգրկում է ծառայությանը աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարին

4. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

**Հոդված 5. Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող քաղաքացիները**

1. Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք Պրոբացիայի ծառայողներ չեն համարվում, և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 3

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ,ԿՈՉՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

**Հոդված 6. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնի անձնագիրը**

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից: Պրոբացիայի ծառայության պաշտոնները դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, համապատասխանաբար՝ գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի:

2. Պրոբացիայի ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է Պրոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկով: Անվանացանկը հաստատում և փոփոխում է Պրոբացիայի ծառայության պետը: Անվանացանկը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Պրոբացիայի ծառայության պետը և նրա տեղակալները համարվում են պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց պաշտոնները չեն ընդգրկվում Պրոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկում:

3. Պրոբացիայի ծառայության պաշտոնի համար սահմանվում է պաշտոնի անձնագիր:

4. Պրոբացիայի ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) Պրոբացիայի ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող Պրոբացիայի ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական

գիտելիքներ և կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

5. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում և փոփոխում է Պրոբացիայի ծառայության պետը:

6. Սույն օրենքով Պրոբացիայի ծառայողի համար նախատեսված իրավունքները, պարտականությունները և սոցիալական երաշխիքները տարածվում են Պրոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների վրա, իսկ սույն օրենքով սահմանված այլ նորմերը Պրոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների վրա տարածվում են միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

7. Պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության, քննչական մարմինների, հակակոռուպցիոն. քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարման ծառայությունների և Պրոբացիայի ծառայության պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 7. Պրոբացիայի ծառայողի անձնական գործը**

1. Պրոբացիայի ծառայողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Պրոբացիայի ծառայողի անձնական գործը վարում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով այնքանով, որքանով դա կիրառելի է Պրոբացիայի ծառայության նկատմամբ:

**Հոդված 8. Պրոբացիայի ծառայողների կոչումները**

1. Պրոբացիայի ծառայողներին շնորհվում են հետևյալ կոչումները՝

1) արդարադատության գնդապետ.

2) արդարադատության փոխգնդապետ.

3) արդարադատության մայոր.

4) արդարադատության կապիտան.

5) արդարադատության ավագ լեյտենանտ.

6) արդարադատության լեյտենանտ.

2. Պրոբացիայի ծառայության պետին և նրա տեղակալներին կարող է շնորհվել արդարադատության գեներալ-մայոր բարձրագույն կոչումը: Արդարադատության գեներալ-մայոր կոչումը շնորհում է վարչապետը՝ Նախարարի առաջարկությամբ:

3. Պրոբացիայի ծառայողներին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կոչումները շնորհում է Պրոբացիայի ծառայության պետը:

4. Կոչումները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված կոչումներին համապատասխան, սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ քան եռօրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Կոչումները շնորհվում են անհատական կարգով, ցմահ, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքի:

6. Պրոբացիայի ծառայողը, ինչպես նաև Պրոբացիայի ծառայությունում ծառայությունը դադարեցրած քաղաքացին ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար դատապարտվելու դեպքում դատապարտվելիս կարող է զրկվել Պրոբացիայի ծառայության կոչումից՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 9. Պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխանող առավելագույն կոչումները**

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները.

1) Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. Պրոբացիայի ծառայության բաժնի պետ՝ արդարադատության գնդապետ,

բ. Պրոբացիայի ծառայության բաժնի պետի տեղակալ՝ արդարադատության փոխգնդապետ.

2) Պրոբացիայի ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝ Պրոբացիայի ծառայության գլխավոր ծառայող և պրոբացիայի ավագ ծառայող՝ արդարադատության մայոր,

3) Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝ Պրոբացիայի ծառայության մասնագետ արդարադատության կապիտան:

**Հոդված 10. Պրոբացիայի ծառայությունում կոչումների շնորհման ժամկետները**

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումների շնորհման համար սահմանվում են Պրոբացիայի ծառայության հետևյալ ժամկետները.

1) արդարադատության լեյտենանտ կոչում ունեցողի համար՝ 2 տարի.

2) արդարադատության ավագ լեյտենանտ կոչում ունեցողի համար՝ 3 տարի.

3) արդարադատության կապիտան կոչում ունեցողի համար՝ 3 տարի.

4) արդարադատության մայոր կոչում ունեցողի համար՝ 4 տարի.

5) արդարադատության փոխգնդապետ կոչում ունեցողի համար՝ 5 տարի:

2. Արդարադատության գնդապետի կոչումով ծառայության ժամկետ չի սահմանվում:

3. Արդարադատության լեյտենանտ կոչումը սկզբնական կոչումն է եւ շնորհվում է Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Պրոբացիայի ծառայությունում մյուս պաշտոններում նշանակվելիս ծառայողին շնորհվում է Պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնին համապատասխանող կոչում:

4. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) եւ զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան կամ որակավորման դաս ունեցող քաղաքացիներին Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում Պրոբացիայի ծառայությունում իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում՝ պաշտոնի նշանակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»:

5. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների կամ դասային աստիճանների կամ որակավորման դասերի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

6. Պրոբացիայի ծառայողին կոչում կամ հերթական կոչում շնորհումը հետաձգվում է, եթե՝

1) Պրոբացիայի ծառայողն ունի չմարված կարգապահական տույժ.

2) Պրոբացիայի ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ նրա նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն:

7. Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում Պրոբացիայի ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի վերացումից հետո՝ եռօրյա ժամկետում:

**Հոդված 11. Պրոբացիայի ծառայությունում կոչումներով ծառայության ժամկետի հաշվարկումը**

1. Կոչումներով ծառայության ժամկետը հաշվարկվում է այդ կոչումի շնորհման մասին իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից: Հերթական կոչում շնորհելու ժամկետը հաշվարկելիս իջեցված կոչման ծառայության ժամանակահատվածը չի հաշվարկվում:

## Գ Լ ՈՒ Խ 4

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԻ ՓՈԽԱԴՐԵԼԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ

**Հոդված 12. Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելը**

1. Պրոբացիայի ծառայության պետին նշանակում և ազատում է վարչապետը՝ Նախարարի առաջարկությամբ:

2. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալներին նշանակում և ազատում է Նախարարը՝ Պրոբացիայի ծառայության պետի առաջարկությամբ:

3. Սույն օրենքով սահմանված Պրոբացիայի ծառայողների պաշտոններում պաշտոնի նշանակում և ազատում է Պրոբացիայի ծառայության պետը:

**Հոդված 13. Պրոբացիայի ծառայությունում ծառայության համար ներկայացվող հիմնական պահանջները**

1. Պրոբացիայի ծառայությունում, որպես Պրոբացիայի ծառայող, ծառայության կարող է անցնել Պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից):

2. Պրոբացիայի ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

3. Պրոբացիայի ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ ռեաբիլիտացնող հիմքով կամ որը դատապարտվել է դիտավորյալ հանցանք կատարելու համար, անկախ դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ եթե առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

**Հոդված 14. Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանները**

1. Պրոբացիայի ծառայության պետ կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Պրոբացիայի ծառայության պետի տեղակալի պաշտոն կամ առնվազն երեք տարի՝

Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության գնդապետի կոչում կամ համապատասխան կոչում կամ ունի բարձրագույն կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ ունի բարձրագույն կրթություն և չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Պրոբացիայի ծառայության պետի պաշտոնը կամ առնվազն երեք տարի՝ Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության փոխգնդապետից ոչ ցածր կոչում կամ համապատասխան կոչում կամ ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի բարձրագույն կրթություն և երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է առնվազն երեք տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

4. Պրոբացիայի ծառայության առաջատար խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է առնվազն մեկ տարի կրտսեր խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

5. Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոնում կարող է նշանակվել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանող քաղաքացին:

6. Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնելու համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

7. Պրոբացիայի ծառայության պաշտոնն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

8. Պրոբացիայի ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

**Հոդված 15. Պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը**

1. Բացառությամբ Պրոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների, Պրոբացիայի ծառայության պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Պրոբացիայի ծառայողների առաջխաղացումը կատարվում է սույն օրենքով սահմանված մրցույթով:

3. Մրցույթին չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, որոնք չեն բավարարում սույն օրենքի 13-րդ, 14-րդ և 34-րդ հոդվածների պահանջները:

**Հոդված 16. Պրոբացիայի ծառայողի երդումը**

1. Պրոբացիայի ծառայությունում որպես Պրոբացիայի ծառայող պաշտոնի նշանակվող անձինք (բացառությամբ առանց ընդհատման Պրոբացիայ ծառայության այլ պաշտոնում տեղափոխման, փոխադրման կամ առաջխաղացման դեպքերի) Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջև, Նախարարի սահմանած կարգով, տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում.

«Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), Հայաստանի Հանրապետության Պրոբացիայի ծառայությունում պաշտոն ստանձնելով՝ երդվում եմ. հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Սահմանադրությունը և օրենքները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել պարտականություններս»:

2. Պրոբացիայի ծառայողը երդում տալիս է անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Պրոբացիայի ծառայողն ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

**Հոդված 17. Պրոբացիայի ծառայողին այլ պաշտոնի փոխադրելը կամ տեղափոխելը**

1. Պրոբացիայի ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Պրոբացիայի ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված առանց իր համաձայնության կարող է փոխադրվել՝

1) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի, այդ թվում՝ այլ տարածքային մարմնի պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո,

2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.

3) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ կամ ավելի ցածր պաշտոնի՝ առողջական վիճակից ելնելով՝ բժշկական եզրակացության հիման վրա:

3. Փորձաշրջանի մեջ գտնվող Պրոբացիայի ծառայողը կարող է փոխադրվել այլ պաշտոնի միայն փորձաշրջանի ավարտից հետո:

4. Պրոբացիայի ծառայողներին սույն օրենքով սահմանված կարգով այլ պաշտոնի փոխադրում է Պրոբացիայի ծառայության պետը:

## Գ Լ ՈՒ Խ 5

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ

**Հոդված 18. Պրոբացիայի ծառայողի մասնագիտական պատրաստումը և վերապատրաստումը**

1. Պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված քաղաքացիները հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով կարող են անցնել մասնագիտական պատրաստում:

2. Պրոբացիայի ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող Պրոբացիայի ծառայողները ենթակա են վերապատրաստման Պրոբացիայի ծառայողի անհատական վերապատրաստման կարիքի գնահատման հիման վրա՝ սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կատարողականի գնահատականի արդյունքներով, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության գերակա խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված Պրոբացիայի ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացման անհրաժեշտության դեպքում, սակայն ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ: Պրոբացիայի ծառայողների վերապատրաստման կարգը սահմանում է Նախարարը: Պրոբացիայի ծառայողների վերապատրաստումը իրականացվում է պետական բյուջեի եւ օրենքով չարգելված միջոցների հաշվին:

3. Պրոբացիայի ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված միջոցների հաշվին վերապատրաստվելուց հետո (բացառությամբ կատարողականի գնահատականի արդյունքներով պարտադիր վերապատրաստման) մեկ տարվա ընթացքում Պրոբաացիայի ծառայությունից ազատվելու դեպքում՝ փոխհատուցում է իր վերապատրաստման համար կատարված ծախսերը՝ ծառայություն չիրականացրած ամիսներին համամասնորեն (մեկ ամսվա փոխհատուցման չափը հաշվարկվում է կատարված ընդհանուր ծախսը բաժանելով 12 ամսվա):

**Հոդված 19. Պրոբացիայի ծառայողի կատարողականի գնահատումը**

1. Պրոբացիայի ծառայողի կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

**Հոդված 20. Պրոբացիայի ծառայողի ատեստավորումը**

1. Պրոբացիայի ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի ծառայողների ատեստավորումն անցկացվում է հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորումից առաջ Պրոբացիայի ծառայողն իր ցանկությամբ կարող է վերապատրաստվել: Պրոբացիայի ծառայողը մինչև ատեստավորումը մեկ անգամ իրավունք ունի անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումն անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո Պրոբացիայի ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակվելիս ծառայողն ենթակա է ատեստավորման: Մինչև հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվելն՝ առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները: Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ Պրոբացիայի ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում Պրոբացիայի ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են և այդ Պրոբացիայի ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, բացառությամբ՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

4. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

5. Ատեստավորման անցկացման նպատակով Նախարարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով:

6. Պրոբացիայի ծառայությունում համապատասխան պաշտոնի առաջին անգամ նշանակված ծառայողը կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման համար դիմում է վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

7. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

8. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող Պրոբացիայի ծառայողներն ատեստավորվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ատեստավորման համար դիմելու իրավունքը Պրոբացիայի ծառայողի մոտ ծագում է նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո: Մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված Պրոբացիայի ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմում է պաշտոնի նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող Պրոբացիայի ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո՝ երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ Պրոբացիայի ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

10. Եթե Պրոբացիայի ծառայողն ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետն արձակուրդի

ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

11. Ատեստավորման ենթակա Պրոբացիայի ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

12. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու,

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը,

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու,

4) ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

13. Ատեստավորման մասնակցած այն Պրոբացիայի ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման համար դիմելու ժամկետի ընթացքում ունեն ատեստավորման համար կրկին դիմելու երկու հնարավորություն՝ համաձայն Նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի:

14. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ Պրոբացիայի ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

15. Պրոբացիայի ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը նաև դատական կարգով:

16. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի

համաձայն՝ հավելավճար հաշվարկվելու դեպքում Պրոբացիայի ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:

## Գ Լ ՈՒ Խ 6
## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

### Հոդված 21. Պրոբացիայի ծառայողի իրավունքները

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, Պրոբացիայի ծառայողների հիմնական իրավունքներն են՝

1) որոշումներ ընդունելը.

2) իր լիազորությունների իրականացման նպատակով ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների, էլեկտրոնային սարքավորումների տեղադրման և էլեկտրոնային հսկողության կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ.

3) անարգել այցելել պրոբացիայի շահառուի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրեր, աշխատավայր և ուսումնական հաստատություն.

4) պրոբացիայի շահառուից պահանջել բացատրություններ, գործի համար անհրաժեշտ փաստաթղթեր.

5) կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.

6) պաշտոնի նշանակման արդյունքների բողոքարկումը.

7) Պրոբացիայի ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին առաջարկությունների ներկայացումը:

2. Պրոբացիայի ծառայողն ունի օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

**Հոդված 22. Պրոբացիայի ծառայողի պարտականությունները**

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, Պրոբացիայի ծառայողի պարտականություններն են՝

1) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկությունները, դիմումները և բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը.

2) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը,

3) պրոբացիայի շահառուի անձնական տվյալների և փաստաթղթերի գաղտնիությունը պահպանելը և պաշտպանության ապահովելը, այդ թվում՝ Պրոբացիայի ծառայությունից ազատվելուց հետո.

4) վարքագծի կանոնները և ներքին կանոնակարգը պահպանելը:

2. Պրոբացիայի ծառայողն ունի օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

**Հոդված 23. Պրոբացիայի ծառայողի պահանջների կատարման պարտադիր լինելը**

1. Պրոբացիայի ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

2. Պրոբացիայի ծառայողի օրինական պահանջները չկատարելը կամ նրա պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 7

## ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

**Հոդված 24. Օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմնի լիազորությունները Պրոբացիայի ծառայության կազմակերպման գործում**

1. Օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմինը կազմակերպում, վերահսկում և մեթոդական ղեկավարում է իրականացնում Պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ:

2. Նախարարը՝

1) կազմակերպում է և ընդհանուր վերահսկողություն է իրականացնում Պրոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ.

2) արձակում է Պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է պարտադիր կատարման ցուցումներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ, կիրառում է կարգապահական և խրախուսանքի միջոցներ.

4) հաստատում է Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, Կառավարության հաստատմանն է ներկայացնում Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը.

5) հաստատում է Պրոբացիայի ծառայության հաստիքացուցակը.

6) քննում է Պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում կասեցնում, փոփոխում, անվավեր, ուժը կորցրած կամ չեղյալ է ճանաչում Պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

7) սահմանում է Պրոբացիայի ծառայության կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

8) սահմանում է Պրոբացիայի ծառայության չափահաս և անչափահաս շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքների կիրառման կարգը.

9) հաստատում է Պրոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, Պրոբացիայի ծառայողին իրավասու մարմնի որոշմամբ սահմանված վայր մուտքն և ելքն արգելելու, Պրոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող արձանագրությունների ձևերը.

10) սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու զեկույցը կազմելու, տրամադրելու կարգը և զեկույցի ձևը.

11) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները.

12) իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 25. Պրոբացիայի ծառայության լիազորությունները**

1. Պրոբացիայի ծառայությունը՝

1) ապահովում է «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.

4) ապահովում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը.

5) տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ.

6) վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.

7) իրականացնում է հաշտարարություն.

8) իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ.

9) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 26. Պրոբացիայի ծառայության պետը և տեղակալները**

1. Պրոբացիայի ծառայության պետը՝

1) ղեկավարում և հսկում է Պրոբացիայի ծառայության գործունեությունը.

2) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև Նախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է Պրոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված որոշումներ, հրամաններ, տալիս է ցուցումներ և հանձնարարականներ.

4) առաջարկություններ է ներկայացնում Նախարարին՝ Պրոբացիայի ծառայության կառուցվածքի և հաստիքացուցակի, Պրոբացիայի ծառայության պետի տեղակալներին նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ.

5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Պրոբացիայի ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս է լիազորագրեր Պրոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար.

6) Պրոբացիայի ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.

7) միջնորդություն է ներկայացնում Նախարարին՝ Պրոբացիայի ծառայության պետի տեղակալներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

8) քննում է Պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում Պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

9) նշանակում է ծառայողական քննություններ.

10) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնում նշանակված Պրոբացիայի ծառայողի լիազորությունները.

11) խրախուսանքի կամ կարգապահական տույժի է ենթարկում Պրոբացիայի ծառայողներին.

12) առաջարկություններ է ներկայացնում Պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

13) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալները՝

1) համակարգում են Պրոբացիայի ծառայության պետի կողմից իրենց հանձնարարված բնագավառներում կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների գործունեությունը.

2) Պրոբացիայի ծառայության պետին ներկայացնում են տեղեկատվություն՝ իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի վերաբերյալ.

3) իրենց համակարգմանը հանձնարարված ոլորտի ստորաբաժանումների ղեկավարներին տալիս են ցուցումներ և հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում են հսկողություն.

4) Պրոբացիայի ծառայության պետին առաջարկություններ են ներկայացնում պրոբացիայի ոլորտի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

5) Պրոբացիայի ծառայության պետին միջնորդություններ են ներկայացնում իրենց հանձնարարված ոլորտի ստորաբաժանումների ղեկավարներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

6) իրենց վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես են գալիս Պրոբացիայի ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս են լիազորագրեր Պրոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար:

**Հոդված 27. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի և կենտրոնական մարմնի մասնագիտական ստորաբաժանման ղեկավարը**

1. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարումն իրականացնում է տարածքային մարմնի ղեկավարը: Տարածքային մարմնի ղեկավարը՝

1) ապահովում է տարածքային մարմնի բնականոն գործունեությունը.

2) համակարգում է Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ծառայողների աշխատանքները.

3) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև Նախարարի, Պրոբացիայի ծառայության պետի հրամանների և ցուցումների, Պրոբացիայի ծառայության պետի տեղակալների ցուցումների և հանձնարարականների կատարումը.

4) ընդունում է որոշումներ, տալիս է ցուցումներ.

5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս տարածքային մարմնի անունից, ներկայացնում նրա շահերը.

6) միջնորդություն է ներկայացնում Պրոբացիայի ծառայության պետին՝ տարածքային մարմնի ծառայողներին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

7) առաջարկություններ է ներկայացնում Պրոբացիայի ծառայության պետին Պրոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

8) պարբերաբար իրականացնում է տարածքային մարմնում առկա անձնական գործերի ուսումնասիրություններ, թերությունների կամ օրենսդրության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում անհապաղ միջոցառումներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ և այդ մասին հայտնում է Պրոբացիայի ծառայության պետին.

9) տարածքային մարմնի անունից ներկայացնում է հաշվետվություններ.

10) ներկայացնում է տարածքային մարմինը այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Կենտրոնական մարմնի մասնագիտական ստորաբաժանման դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններն այնքանով, որքանով կիրառելի են իրականացնում է մասնագիտական ստորաբաժանման ղեկավարը:

## Գ Լ ՈՒ Խ 8

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

### Հոդված 28. Պրոբացիայի ծառայության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը

1. Պրոբացիայի ծառայության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

### Հոդված 29. Պրոբացիայի ծառայողի վարձատրությունը

1. Պրոբացիայի յուրաքանչյուր ծառայող ունի ծառայության համար համարժեք վարձատրության իրավունք:

2. Պրոբացիայի ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

**Հոդված 30. Պրոբացիայի ծառայողի կողմից տրանսպորտից օգտվելը**

1. Ծառայողական պարտականությունները կատարելիս Պրոբացիայի ծառայողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու պայմանները, ինչպես նաև անձնական տրանսպորտը ծառայողական նպատակներով օգտագործելու ծախսերի հատուցման կարգը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 31. Պրոբացիայի ծառայողի համազգեստը, ծառայողական վկայականը**

1. Պրոբացիայի ծառայողին կարող է տրվել Պրոբացիայի ծառայողի համազգեստ, որի նկարագիրը, այն տրամադրելու, կրելու կարգը և պայմանները, ինչպես նաև այն կրելու ժամկետները սահմանում է Նախարարը:

2. Պրոբացիայի ծառայողին տրվում է սահմանված ձևի ծառայողական վկայական, որի ձևը և տրամադրելու կարգը սահմանում է նախարարը:

**Հոդված 32. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**

1. Բացի «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ Պրոբացիայի ծառայողն իրավունք չունի դատարանում իրականացնելու ներկայացուցչություն, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի:

## Գ Լ ՈՒ Խ 9

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ

**Հոդված 33. Պրոբացիայի ծառայողի աշխատաժամանակի տևողությունը**

1. Պրոբացիայի ծառայողի համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ կամ հերթափոխային ծառայություն: Պրոբացիայի ծառայության պետի ներքին իրավական ակտով կարող է սահմանվել հերթապահություն:

2. Պրոբացիայի ծառայողը կարող է ներգրավվել արտաժամյա ծառայության՝ Պրոբացիայի ծառայությունում անհետաձգելի կամ հրատապ խնդիրներ առաջանալու դեպքերում:

3. Պրոբացիայի ծառայողի արտաժամյա աշխատաժամանակի և աշխատաժամանակի տևողության վերաբերյալ կիրառելի են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված համապատասխան կարգավորումները:

**Հոդված 34. Պրոբացիայի ծառայողի ժամանակավոր անաշխատունակության դեպքում իր պաշտոնեական պարտականությունների կատարումից ժամանակավորապես ազատելը**

1. Պրոբացիայի ծառայողը ժամանակավոր անաշխատունակության դեպքում առողջապահական հաստատության համապատասխան տեղեկանքի հիման վրա կարող է ժամանակավորապես ազատվել իր պաշտոնեական պարտականությունների կատարումից ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր:

## Գ Լ ՈՒ Խ 10

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ

**Հոդված 35. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները**

1. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Պրոբացիայի ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

2. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչում այդ թվում իր զբաղեցրած պաշտոնի համապատասխան կոչումից ավելի բարձր կոչումի շնորհում խրախուսանքի տեսակը, որը Պրոբացիայի ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել մեկ անգամ: Արտահերթ կոչումի շնորհում խրախուսանքի տեսակը կիրառում է կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսանքի տեսակը չի կարող կիրառվել Պրոբացիայի ծառայության պաշտոնին համապատասխանող՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն կոչում ունեցող Պրոբացիայի ծառայողի նկատմամբ:

4. Որպես «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված խրախուսանքի տեսակների այլընտրանք՝ երկարամյա ծառայության կամ ծառայողական պարտականությունները կամ հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար Պրոբացիայի ծառայողը կարող է պարգևատրվել կրծքանշանով:

5. Կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 36. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը**

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ որպես խիստ կարգապահական տույժ կարող է կիրառվել նաև կոչումի իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը՝ մեկ անգամ, կոչում շնորհած պաշտոնատար անձի կողմից:

3. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է Պրոբացիայի ծառայության պետը:

4. Պրոբացիայի ծառայության պետի նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ Նախարարի միջնորդությամբ:

5. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալի նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է Նախարարը՝ սեփական նախաձեռնությամբ կամ Պրոբացիայի ծառայության պետի միջնորդությամբ:

**Հոդված 37. Պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնները խախտելու կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները**

1. Պրոբացիայի ծառայողների Պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնները խախտելու կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով:

## Գ Լ ՈՒ Խ 11

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ

**Հոդված 38. Պրոբացիայի ծառայությունից ազատելը**

1. Պրոբացիայի ծառայողը Պրոբացիայի ծառայությունից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը կամ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ.

4) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

5) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում.

6) սույն օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

7) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

8) սույն օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված ժամկետում կամ ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք չբերելու, ինչպես նաև հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերելու կամ սույն օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան կրկնակի ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերելու դեպքում կամ սույն օրենքի 19-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված կարգով կրկնակի ատեստավորման համար չդիմելու դեպքում.

9) Պրոբացիայի ծառայողի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

10) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրված արձակուրդը.

11) հանրային պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

12) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.

13) առողջական վիճակի պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում:

2. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու Պրոբացիայի ծառայողի լիազորությունները:

3. Պրոբացիայի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ, որի վերաբերյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եռօրյա ժամկետում կազմում է համապատասխան ակտ:

4. Պրոբացիայի ծառայողին ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում՝ երեք

աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը կամ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու.դեպքերի:

**Հոդված 39. Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելը**

1. Պրոբացիայի ծառայողը Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատվում է՝

1) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում՝ այլ պաշտոնի նշանակվելիս.

2) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե Պրոբացիայի ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

3) առողջական վիճակի պատճառով՝ տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում.

4) դատարանի վճռի հիման վրա Պրոբացիայի ծառայողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում:

2. Պրոբացիայի ծառայողին Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

**Հոդված 40. Պրոբացիայի ծառայողի լիազորությունների ժամանակավորապես դադարեցումը**

1. Պրոբացիայի ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել ծառայողական քննության ժամանակահատվածում՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը:

2. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում նրա պաշտոնավարումը կարող է կասեցվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

**Հոդված 41. Պրոբացիայի ծառայությունում տարիքային սահմանափակումները**

1. Պրոբացիայի ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվում 55 տարեկանը:

2. Պրոբացիայի ծառայության պետը՝ Նախարարի համաձայնությամբ, Պրոբացիայի ծառայողի պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալու դեպքում Պրոբացիայի ծառայողի ծառայության ժամկետը երկարաձգում է մինչև 5 տարի ժամկետով, եթե առկա չեն Պրոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցբելու համար խոչընդոտ հանդիսացող օրենքով սահմանված հիմքեր:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը լրանալու դեպքում, Պրոբացիայի ծառայությունից ազատումը կատարվում է սահմանված տարիքը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա 1-ին, եթե Պրոբացիայի ծառայողի ծառայության ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով չի երկարաձգվել:

**Հոդված 42. Պրոբացիայի ծառայությունից ազատվածներին տրվող վճարումները և կենսաթոշակի ապահովումը**

1. Պրոբացիայի ծառայությունից ազատվածներին տրվող վճարումները, արտոնությունները, կենսաթոշակի ապահովումը և կենսաթոշակ նշանակելու պայմանները, տեսակները, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տրվող դրամական օգնությունը և վճարումները, ծառայության ստաժի հաշվարկման կարգը, ինչպես նաև սոցիալական ապահովության հետ կապված մյուս հարաբերությունները սահմանվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

**Հոդված 43. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվը**

1. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված Պրոբացիայի ծառայողները: Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները կադրերի ռեզերվում չեն գրանցվում:

2. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում Պրոբացիայի ծառայողի մեկանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը 6 ամիս է, սակայն ոչ ավելի, քան մինչև Պրոբացիայի ծառայողի պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալը:

3. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առաջին երեք ամիսների համար Պրոբացիայի ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Այն դեպքում, երբ Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում Պրոբացիայի ծառայողն անձնական նախաձեռնությամբ ազատվում է Պրոբացիայի ծառայությունից, ապա Պրոբացիայի ծառայողի վարձատրությունն իրականացվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

4. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 12

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

**Հոդված 44. Վեճերի լուծման համար դիմելու կարգը և ժամկետները**

1. Պրոբացիայի ծառայությունում փոխադրվելու, պաշտոնը կամ կոչումը իջեցվելու, կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում Պրոբացիայի ծառայողը կարող է վերադասության կամ դատական կարգով, իսկ Պրոբացիայի ծառայությունից ազատվելու

հետ չհամաձայնվելու դեպքում դատական կարգով բողոքարկել այդ իրավական ակտը՝ դրան ստորագրությամբ ծանոթանալու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:

**Հոդված 45. Ծառայության կամ պաշտոնում վերականգնումը**

1. Պրոբացիայի ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված կամ փոխադրված Պրոբացիայի ծառայողը ենթակա է իր ծառայությունում կամ պաշտոնում վերականգնման: Անհիմն կամ անօրինական իջեցված կոչումը ենթակա է վերականգնման:

**Հոդված 46. Կոչումի շնորհումը և ծառայության ժամկետի հաշվարկը ծառայության վերականգնումից հետո**

1. Պրոբացիայի ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված և հետագայում վերականգնված Պրոբացիայի ծառայողի անընդմեջ ծառայության ստաժում, հերթական կոչում շնորհելու ժամկետում, տոկոսային հավելավճարը հաշվարկելիս և կենսաթոշակ նշանակելիս հաշվարկվում է նաև անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածը:

2. Պրոբացիայի ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված, Պրոբացիայի ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված միջին աշխատավարձի չափով՝ բացառությամբ կադրերի ռեզերվում գտնված ժամանակահատվածում ստացած վարձատրության:

3. Պրոբացիայի այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, ստանում են հատուցում, եթե այդ աշխատանքից կամ գործունեությունից ստացած ամսական եկամուտը ավելի քիչ է, քան նախկինում զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափը: Հատուցումը վճարվում է նրանց՝ Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և Պրոբացիայի ծառայությունից ազատված

ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած դրական տարբերության չափով:

## ԳԼՈՒԽ 13
## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

### Հոդված 47. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Հանձնաժողովի կազմում են Պրոբացիայի ծառայության պետի տեղակալներից մեկը՝ Պրոբացիայի ծառայության պետի որոշմամբ, Պրոբացիայի ծառայության մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից 3 Պրոբացիայի ծառայող՝ Պրոբացիայի ծառայության պետի որոշմամբ, և Նախարարի նշանակած 3 ներկայացուցիչ: Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի անդամները նշանակվում են առավելագույնը 3 տարի ժամկետով: Հանձնաժողովում նոր անդամների նշանակումները սույն հոդվածի սույն մասով սահմանված կարգով կատարվում են հանձնաժողովի գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան նախորդող օրը:

2. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը նախագահում է հանձնաժողովի կազմում ընդգրկված Պրոբացիայի ծառայության պետի տեղակալը: Հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքների բաշխում հանձնաժողովի անդամների միջև:

3. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը որոշումներն ընդունում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում քննարկման դրված հարցը համարվում է մերժված:

**Հոդված 48. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի գործունեությունը**

1. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովն աշխատանքները կազմակերպում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի համապատասխան սահմանված ծառայողական քննության կարգին համապատասխան, այնքանով որքանով (mutatis mutandis) կարգի դրույթները կիրառելի են Պրոբացիայի ծառայության նկատմամբ:

2. Հանձնաժողովը ծառայողական քննության վերաբերյալ եզրակացություն ընդունում է՝ գումարելով հանձնաժողովի նիստ: Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի առնվազն հինգ անդամ:

3. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի ուղենիշային սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում համապատասխան պաշտոնատար անձին:

5. Պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը:

**Հոդված 49.** Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացության քննարկումը

1. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքով ընդունում է եզրակացությունն, որը անմիջապես ուղարկում է ծառայողական քննության կողմերին և տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

2. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եզրակացությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը և արդյունքների մասին ընդունում Պրոբացիայի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու վերաբերյալ որոշում:

**Հոդված 50. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը**

1. Պրոբացիայի ծառայության անձնակազմի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1) Պրոբացիայի ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

3) Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի պահանջով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

4) վարում է Պրոբացիայի ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վիճակագրություն և նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի

վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

5) Պրոբացիայի ծառայողներին տրամադրում է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք:

## ԳԼՈՒԽ 14
## ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

### Հոդված 51. Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ գործադրելու իրավունքը

1. Պրոբացիայի ծառայողը իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ՝ ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ իրեն ցույց տրված դիմադրությունը կամ իր վրա կատարված հարձակումը կանխելու դեպքում:

2. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և Պրոբացիայի ծառայողի կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

3. Պրոբացիայի ծառայողների կողմից գործադրվող հատուկ միջոցների ցանկը սահմանում է Կառավարությունը:

### Հոդված 52. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ գործադրելու պայմաններն ու սահմանները

1. Պրոբացիայի ծառայողը, սույն օրենքի 51-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով, իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ, եթե այլ միջոցները չեն ապահովում նրա վրա դրված պարտականությունների կատարումը:

2. Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ գործադրելիս Պրոբացիայի ծառայողը պարտավոր է՝

1) նախազգուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում Պրոբացիայի ծառայողի կյանքի կամ առողջության համար.

2) դրանք գործադրել իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ.

3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն:

3. Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման դեպքում Պրոբացիայի ծառայողը անմիջապես զեկուցում է վերադասության կարգով:

4. Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին Պրոբացիայի ծառայության պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

5. Ֆիզիկական ուժը և հատուկ միջոցները՝ լիազորությունները գերազանցելով գործադրելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

## Գ Լ ՈՒ Խ 15

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 53. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի մեկից:

### Հոդված 54. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը

1. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

**Հոդված 55. Պրոբացիայի ծառայողների առաջին կատարողականի գնահատումը**

1. Պրոբացիայի ծառայողների առաջին կատարողականի գնահատումն իրականացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամիս հետո:

**Հոդված 56. Նախկինում կիրառված կարգապահական տույժերը հաշվի առնելը**

1. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կիրառված կարգապահական տույժերը պահպանվում են:

2. Պրոբացիայի ծառայողին սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով Պրոբացիայի ծառայությունից ազատելիս հաշվի են առնվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նրա նկատմամբ կիրառված և սահմանված կարգով չմարված կարգապահական տույժերը:

**Հոդված 57. Նախկինում շնորհված կոչումները և դասային աստիճանները**

1. Պրոբացիայի ծառայությունում ծառայողներին նախկինում շնորհված կոչումները և դասային աստիճանները, անկախ նրանց զբաղեցրած պաշտոններից, համապատասխանեցվում են սույն օրենքով սահմանված կոչումներին: Դասային աստիճան (կոչում) չունեցող Պրոբացիայի ծառայողներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում շնորհվում է զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված սկզբնական կոչումը: Պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխան սկզբնական կոչումները սահմանում է կառավարությունը:

**Հոդված 58. Պրոբացիայի ծառայության ստաժի հաշվարկը**

1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Պրոբացիայի ծառայողների, կամ ազատազրկման հետ կապված կամ ազատազրկման հետ չկապված պատիժներ կատարած կամ դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացրած ծառայողների և աշխատակիցների աշխատանքային ստաժը հաշվարկվում է Պրոբացիայի ծառայության ստաժի մեջ:

**Հոդված 59. Պրոբացիայի քաղաքացիական ծառայողների հետագա պաշտոնավարումը**

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք շարունակում են պաշտոնավարել և իրականացնել Պրոբացիայի ծառայությանը վերապահված գործառույթները մինչև Արդարադատության նախարարի որոշմամբ սահմանված կարգով որակավորման ստուգման արդյունքներով Պրոբացիայի ծառայության պաշտոնների նշանակվելը:

2. Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակումները կատարվում են որակավորման ստուգման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման ստուգումը չանցած ծառայողներն ազատվում են զբաղեցրած պաշտոններից համապատասխան օրենքներով սահմանված կարգով:

3. Որակավորման ստուգումն անցկացվում է Արդարադատության նախարարի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:

**Հոդված 60. Պրոբացիայի ծառայողների աշխատավարձի պահպանումը**

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության քաղաքացիական ծառայողները Պրոբացիայի ծառայության համապատասխան պաշտոնի նշանակվելիս չեն կարող ստանալ ավելի ցածր աշխատավարձ այն աշխատավարձի չափից, որը ստացել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ:

**Հոդված 61. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի առաջին կազմը**

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ձևավորվող Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի առաջին կազմում Պրոբացիայի ծառայության մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից 3 ծառայողները և Նախարարի նշանակած 3 ներկայացուցիչները կազմում ընդգրկվում են մեկ, երկու և երեք տարի ժամկետներով, նշանակող պաշտոնատար անձի որոշմամբ:

**Տեղեկանք**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ
# ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## Գ Լ ՈՒ Խ 1
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պրոբացիա իրականացնող իրավասու պետական մարմնում (այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն) ծառայության՝ որպես պետական ծառայության առանձին տեսակի կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ Պրոբացիայի ծառայության հիմնական սկզբունքները և խնդիրները, Պրոբացիայի ծառայություն անցնելու կարգը և Պրոբացիայի ծառայության պայմանները, Պրոբացիայի ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, պաշտոններն ու կոչումների, ծառայողների բարեվարքության համակարգի, Պրոբացիայի ծառայության հետ կապված այլ հիմնական հարաբերություններ:

2. Պրոբացիայի ծառայության անցնելու, իրականացնելու և դադարեցնելու հետ կապված հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն օրենքով, կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով իսկ դրանցով կարգավորված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

**Հոդված 2. Պրոբացիայի ծառայությունը**

1. Պրոբացիայի ծառայությունը ապահովում է «Պրոբացիայի մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքով սահմանված Պ~~պ~~րոբացիայի ծառայության գործառույթների և պրոբացիայի խնդիրների իրականացումը:

2. Պրոբացիայում ծառայողը Պ~~պ~~րոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձն է, ով տվել է պրոբացիայի ծառայողի երդում:

## Գ Լ ՈՒ Խ 2

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ*

**Հոդված 3. Պրոբացիայի ծառայության համակարգը**

1. Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից: Կենտրոնական մարմինը բաղկացած է հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից: Տարածքային մարմինները գործում են բաժնի կարգավիճակով:

2. Պրոբացիայի ծառայությունը իրականացվում է կենտրոնական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումների և տարածքային մարմինների կողմից:

3. Պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, ~~կառուցվածքը և~~ հաստիքացուցակը հաստատում է օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմնի ղեկավարը (այսուհետ՝ նախարար):

4. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմիններն ունեն Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց հայերեն անվանմամբ կլոր կնիք, միասնական նմուշի ձևաթղթեր, խորհրդանիշ և կարող են ունենալ անհատականացման այլ միջոցներ:

5. Պրոբացիայի ծառայության կենտրոնական և տարածքային մարմինների կողմից օգտագործվող կնիքի, միասնական նմուշի ձևաթղթերի, խորհրդանիշի, անհատականացման այլ միջոցների նկարագիրը հաստատում է նախարարը:

**Հոդված 4. Գլխավոր քարտուղարը և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները**

1. Պրոբացիայի ծառայությունը ունի գլխավոր քարտուղար: ~~և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ:~~ Գլխավոր քարտուղարի լիազորությունները սահմանվում են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքով:

2. Պրոբացիայի ծառայության գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայող է, որը պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով~~որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը~~:

3. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայությունն ընդգրկում է ծառայությ~~ու~~ան աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք անմիջական հաշվետու են գլխավոր քարտուղարին~~:~~

4. Պրոբացիայի ծառայությունում քաղաքացիական ծառայության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

**Հոդված 5. Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող քաղաքացիները**

1. Պրոբացիայի ծառայությունում տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք Պ~~պ~~րոբացիայի ծառայողներ չեն համարվում, և նրանց աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 3

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ, ~~ԵՎ~~ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ*

**Հոդված 6. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնի անձնագիրը**

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնները դասակարգվում են խմբերի՝ ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց լուծման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տեսանկյունից ներկայացվող պահանջներից: Պրոբացիայի ծառայության պաշտոնները դասակարգվում են աստիճանական համակարգով՝ բարձրից ցածր, համապատասխանաբար՝ գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի:

2. Պրոբացիայի ծառայության պաշտոնների խմբերում պաշտոնների դասակարգումն իրականացվում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկով: Անվանացանկը հաստատում և փոփոխում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետը: Անվանացանկը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով: Պրոբացիայի ծառայության պետը և նրա տեղակալները համարվում են պետական վարչական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց պաշտոնները չեն ընդգրկվում Պ~~պ~~րոբացիայի ծառայության պաշտոնների անվանացանկում:

3. Պրոբացիայի ծառայության պաշտոնի համար սահմանվում է պաշտոնի անձնագիր:

4. Պրոբացիայի ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիրը) Պ~~պ~~րոբացիայի ծառայության իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող Պ~~պ~~րոբացիայի ծառայողի գործառույթները, իրավունքներն ու

պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող և սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է:

5. Պրոբացիայի ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում և փոփոխում է Պ~~ռ~~ոբացիայի ծառայության պետը:

6. Սույն օրենքով Պ~~ռ~~ոբացիայի ծառայողի համար նախատեսված իրավունքները, պարտականությունները և սոցիալական երաշխիքները տարածվում են Պ~~ռ~~ոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների վրա, իսկ սույն օրենքով սահմանված այլ նորմերը Պ~~ռ~~ոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների վրա տարածվում են միայն սույն օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:

7. Պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության, քննչական մարմինների, հակակոռուպցիոն. քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարման ծառայությունների և Պ~~ռ~~ոբացիայի ծառայության պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 7. Պրոբացիայի ծառայողի անձնական գործը**

1. Պրոբացիայի ծառայողի ծառայության ընթացքն արտացոլվում է նրա անձնական գործում: Պրոբացիայի ծառայողի անձնական գործը վարում է համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը՝ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով այնքանով, որքանով դա կիրառելի է Պ~~ռ~~ոբացիայի ծառայության նկատմամբ:

**Հոդված 8. Պրոբացիայի ծառայողների կոչումները**

1. Պրոբացիայի ծառայողներին շնորհվում են հետևյալ կոչումները՝

1) արդարադատության գնդապետ.

2) արդարադատության փոխգնդապետ.

3) արդարադատության մայոր.

4) արդարադատության կապիտան.

5) արդարադատության ավագ լեյտենանտ.

6) արդարադատության լեյտենանտ.

2. Պրոբացիայի ծառայության պետին և նրա տեղակալներին կարող է շնորհվել արդարադատության գեներալ-մայոր բարձրագույն կոչումը: Արդարադատության գեներալ-մայոր կոչումը շնորհում է վարչապետը՝ նախարարի առաջարկությամբ:

3. Պրոբացիայի ծառայողներին սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կոչումները շնորհում է Պրոբացիայի ծառայության պետը:

4. Կոչումները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված կոչումներին համապատասխան, սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ քան եռօրյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Կոչումները շնորհվում են անհատական կարգով, ցմահ, բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքի:

6. Պրոբացիայի ծառայողը, ինչպես նաև Պրոբացիայի ծառայությունում ծառայությունը դադարեցրած քաղաքացին ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի համար դատապարտվելու դեպքում դատապարտվելիս կարող է զրկվել Պրոբացիայի ծառայության կոչումից՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 9. Պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխանող առավելագույն կոչումները**

1. Պրոբացիայի ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները.

1) Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. Պրոբացիայի ծառայության բաժնի պետ՝ արդարադատության գնդապետ,

բ. Պ~~պ~~րոբացիայի ծառայության բաժնի պետի տեղակալ՝ արդարադատության փոխգնդապետ.

2) Պ~~պ~~րոբացիայի ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝ Պ~~պ~~րոբացիայի ծառայության գլխավոր ծառայող և պրոբացիայի ավագ ծառայող՝ արդարադատության մայոր,

3) Պ~~պ~~րոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝ Պրոբացիայի ծառայության մասնագետ արդարադատության կապիտան:

**Հոդված 10. Պրոբացիայի ծառայությունում կոչումների շնորհման ժամկետները**

1. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական կոչումների շնորհման համար սահմանվում են Պրոբացիայի ծառայության հետևյալ ժամկետները.

1) արդարադատության լեյտենանտ կոչում ունեցողի համար՝ 2 տարի.

2) արդարադատության ավագ լեյտենանտ կոչում ունեցողի համար՝ 3 տարի.

3) արդարադատության կապիտան կոչում ունեցողի համար՝ 3 տարի.

4) արդարադատության մայոր կոչում ունեցողի համար՝ 4 տարի.

5) արդարադատության փոխգնդապետ կոչում ունեցողի համար՝ 5 տարի:

2. Արդարադատության գնդապետի կոչումով ծառայության ~~գնդապետ կոչումը շնորհելու համար~~ ժամկետ չի սահմանվում:

3. Արդարադատության լեյտենանտ կոչումը սկզբնական կոչումն է եւ շնորհվում է Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Պրոբացիայի ծառայությունում մյուս պաշտոններում նշանակվելիս ծառայողին շնորհվում է Պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնին համապատասխանող կոչում:

4. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) եւ զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան կամ որակավորման դաս ունեցող քաղաքացիներին Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում Պրոբացիայի ծառայությունում իր զինվորական կամ

հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում՝ պաշտոնի նշանակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:»: ~~3. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան կամ որակավորման դաս ունեցող քաղաքացիներին պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի, պաշտոնի նշանակվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:~~

~~4. Արդարադատության լեյտենանտ կոչումը սկզբնական կոչումն է և շնորհվում է պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի: Պրոբացիայի ծառայությունում մյուս պաշտոններում նշանակվելիս ծառայողին շնորհվում է պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնին համապատասխանող կոչում:~~

5. Այլ պետական մարմիններում շնորհված զինվորական կամ հատուկ կոչումների կամ դասային աստիճանների կամ որակավորման դասերի համապատասխանությունը սույն օրենքով սահմանված կոչումներին սահմանում է Կառավարությունը:

6. Պրոբացիայի ծառայողին կոչում կամ հերթական կոչում շնորհումը հետաձգվում է, եթե՝

1) Պ~~պ~~րոբացիայի ծառայողն ունի չմարված կարգապահական տույժ.

2) Պ~~պ~~րոբացիայի ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում կամ նրա նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն:

7. Հերթական կոչումի շնորհումը հետաձգելու դեպքում Պ~~պ~~րոբացիայի ծառայողի հերթական կոչումը շնորհվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված հիմքերի վերացումից հետո՝ եռօրյա ժամկետում:

**Հոդված 11. Պրոբացիայի ծառայությունում կոչումներով ծառայության ժամկետի հաշվարկումը**

1. Կոչումներով ծառայության ժամկետը հաշվարկվում է այդ կոչումի շնորհման մասին իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից: Հերթական կոչում շնորհելու ժամկետը հաշվարկելիս իջեցված կոչման ծառայության ժամանակահատվածը չի հաշվարկվում:

## Գ Լ ՈՒ Խ 4

## ~~ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ~~ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԻ ՓՈԽԱԴՐԵԼԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ

### Հոդված 12. Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելը

1. Պրոբացիայի ծառայության պետին նշանակում և ազատում է ~~Հայաստանի Հանրապետության~~ վարչապետը՝ նախարարի առաջարկությամբ:

2. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալներին նշանակում և ազատում է նախարարը՝ Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետի առաջարկությամբ:

3. Սույն օրենքով սահմանված Պ~~պ~~րոբացիայի ծառայողների պաշտոններում պաշտոնի նշանակում և ազատում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետը:

### Հոդված 13. Պրոբացիայի ծառայությունում ծառայության համար ներկայացվող հիմնական պահանջները

1. Պրոբացիայի ծառայությունում, որպես Պ~~պ~~րոբացիայի ծառայող, ծառայության կարող է անցնել Պ~~պ~~րոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, ~~բարձրագույն կրթություն ունեցող~~ Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես

նաև այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից):

2. Պրոբացիայի ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

3. Պրոբացիայի ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական հետապնդում չի հարուցվել ոչ ռեաբիլիտացնող հիմքով կամ որը դատապարտվել է դիտավորյալ հանցանք կատարելու համար, անկախ դատվածությունը վերացված կամ մարված լինելու հանգամանքից կամ եթե առկա է «Հանրային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը:

**Հոդված 14. Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելու պայմանները**

1. Պրոբացիայի ծառայության պետ կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Պրոբացիայի ծառայության պետի տեղակալի պաշտոն կամ առնվազն երեք տարի՝ Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության գնդապետի կոչում կամ համապատասխան կոչում կամ ունի բարձրագույն կրթություն և հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ ունի բարձրագույն կրթություն և չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալ կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Պրոբացիայի ծառայության պետի պաշտոնը կամ առնվազն երեք տարի՝ Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոն և ունի արդարադատության փոխգնդապետից ոչ ցածր կոչում կամ համապատասխան կոչում կամ ունի հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ ունի բարձրագույն կրթություն և երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Պրոբացիայի ծառայության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է առնվազն երեք տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի

հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

4. Պրոբացիայի ծառայության առաջատար խմբի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է առնվազն մեկ տարի կրտսեր խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

5. Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոնում կարող է նշանակվել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխանող քաղաքացին:

6. Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոն զբաղեցնելու համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

7. Պրոբացիայի ծառայության պաշտոնն առաջին անգամ զբաղեցնող անձի նշանակումն իրականացվում է մինչև վեց ամիս փորձաշրջանով: Փորձաշրջանի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

8. Պրոբացիայի ծառայությունում թափուր պաշտոնի կարող է նշանակվել ժամանակավոր պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

**Հոդված 15. Պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը**

1. Բացառությամբ Պրոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների, Պրոբացիայի ծառայության պաշտոնները զբաղեցվում են մրցույթի արդյունքներով: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Պրոբացիայի ծառայողների առաջխաղացումը կատարվում է սույն օրենքով սահմանված մրցույթով:

3. Մրցույթին չեն կարող մասնակցել այն քաղաքացիները, որոնք չեն բավարարում սույն օրենքի 13-րդ, 14-րդ և 34-րդ հոդվածների պահանջները:

**Հոդված 16. Պրոբացիայի ծառայողի երդումը**

1. Պրոբացիայի ծառայությունում որպես Պրոբացիայի ծառայող պաշտոնի նշանակվող անձինք (բացառությամբ առանց ընդհատման Պրոբացիայ ծառայության այլ պաշտոնում տեղափոխման, փոխադրման կամ առաջխաղացման դեպքերի) Հայաստանի Հանրապետության պետական դրոշի առջև, ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարի սահմանած կարգով, տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում.

«Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), Հայաստանի Հանրապետության Պ~~պ~~րոբացիայի ծառայությունում պաշտոն ստանձնելով՝ երդվում եմ. հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Սահմանադրությունը և օրենքները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, աջակցել սահմանադրական կարգի պահպանմանը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել պարտականություններս»:

2. Պրոբացիայի ծառայողը երդում տալիս է անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Պրոբացիայի ծառայողն ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

**Հոդված 17. Պրոբացիայի ծառայողին այլ պաշտոնի փոխադրելը կամ տեղափոխելը**

1. Պրոբացիայի ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Պրոբացիայի ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված առանց իր համաձայնության կարող է փոխադրվել՝

1) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի, այդ թվում՝ այլ տարածքային մարմնի պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո,

2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.

3) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ կամ ավելի ցածր պաշտոնի՝ առողջական վիճակից ելնելով՝ բժշկական եզրակացության հիման վրա:

3. Փորձաշրջանի մեջ գտնվող Պրոբացիայի ծառայողը կարող է փոխադրվել այլ պաշտոնի միայն փորձաշրջանի ավարտից հետո:

4. Պրոբացիայի ծառայողներին սույն օրենքով սահմանված կարգով այլ պաշտոնի փոխադրում է Պրոբացիայի ծառայության պետը:

## Գ Լ ՈՒ Խ 5

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ, ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ*

**Հոդված 1~~7~~8. Պրոբացիայի ծառայողի մասնագիտական պատրաստումը և վերապատրաստումը**

1. Պրոբացիայի ծառայությունում պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված քաղաքացիները հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետի որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով կարող են անցնել մասնագիտական պատրաստում:

2.Պրոբացիայի ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող Պրոբացիայի ծառայողները ենթակա են վերապատրաստման Պրոբացիայի ծառայողի անհատական վերապատրաստման կարիքի գնահատման հիման վրա՝ սույն օրենքի 1~~8~~9-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կատարողականի գնահատականի արդյունքներով, ինչպես նաև Պրոբացիայի ծառայության գերակա խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված Պրոբացիայի ծառայողների մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացման անհրաժեշտության

դեպքում, սակայն ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ: Պրոբացիայի ծառայողների վերապատրաստման կարգը սահմանում է ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարը: Պրոբացիայի ծառայողների վերապատրաստումը իրականացվում է պետական բյուջեի եւ օրենքով չարգելված միջոցների հաշվին:

3. Պրոբացիայի ծառայողը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով սահմանված միջոցների հաշվին վերապատրաստվելուց հետո (բացառությամբ կատարողականի գնահատականի արդյունքներով պարտադիր վերապատրաստման) մեկ տարվա ընթացքում Պրոբաացիայի ծառայությունից ազատվելու դեպքում՝ փոխհատուցում է իր վերապատրաստման համար կատարված ծախսերը՝ ծառայություն չիրականացրած ամիսներին համամասնորեն (մեկ ամսվա փոխհատուցման չափը հաշվարկվում է կատարված ընդհանուր ծախսը բաժանելով 12 ամսվա):

**Հոդված 1~~8~~9. Պրոբացիայի ծառայողի կատարողականի գնահատումը**

1. Պրոբացիայի ծառայողի կատարողականի գնահատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

**Հոդված ~~19~~20. Պրոբացիայի ծառայողի ատեստավորումը**

1. Պրոբացիայի ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր խմբերի ծառայողների ատեստավորումն անցկացվում է հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորումից առաջ Պրոբացիայի ծառայողն իր ցանկությամբ կարող է վերապատրաստվել: Պրոբացիայի ծառայողը մինչև ատեստավորումը մեկ անգամ իրավունք ունի անցնելու վերապատրաստում: Ատեստավորման նպատակով վերապատրաստումն անցկացվում է միայն առաջին անգամ ատեստավորման համար:

3. Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո Պ~~պ~~րոբացիայի ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ

պաշտոնի նշանակվելիս ծառայողն ենթակա է ատեստավորման: Մինչև հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվելն՝ առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները: Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ Պրոբացիայի ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում Պրոբացիայի ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են և, այդ Պրոբացիայի ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, բացառությամբ՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:

4. Ատեստավորման կարգը սահմանվում է Կառավարության որոշմամբ:

5. Ատեստավորման անցկացման նպատակով համապատասխան նախարարի հրամանով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով:

6. Պրոբացիայի ծառայությունում համապատասխան պաշտոնի առաջին անգամ նշանակված ծառայողը կարող է ատեստավորում անցնել պաշտոնի նշանակվելուց ոչ շուտ, քան վեց ամիս անց: Նա սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ատեստավորման համար դիմում է վեցամսյա ժամկետը լրանալուց հետո երեք տարվա ընթացքում:

7. Ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում հավելավճարը հաշվարկվում է այդ իրավունքի ձեռքբերման օրվանից:

8. Համապատասխան պաշտոնում ատեստավորված և տվյալ պաշտոնի խմբի համար սահմանված չափով հավելավճար ստացող Պրոբացիայի ծառայողներն ատեստավորվում են յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ հավելավճարի հաշվարկումը շարունակելու համար: Հավելավճարի հաշվարկումը շարունակելու նպատակով ատեստավորման համար դիմելու իրավունքը Պրոբացիայի ծառայողի մոտ ծագում է նախորդ ատեստավորման արդյունքներով հավելավճար հաշվարկելու իրավունքը ձեռք բերելու օրվանից երկու տարի հետո: Մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված Պրոբացիայի ծառայողը հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորման համար դիմում է պաշտոնի նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում:

9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող Պրոբացիայի ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո՝~~: Սույն մասով նախատեսված ծառայողներն ատեստավորման համար կարող են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո~~ երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ Պրոբացիայի ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:

10. Եթե Պ~~պ~~րոբացիայի ծառայողն ատեստավորման արդյունքներով ստացել է սույն հոդվածի 12-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված եզրակացությունը, որից հետո նրան տրամադրվել է հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ, ապա հավելավճարի հաշվարկման ժամկետն արձակուրդի ժամանակահատվածում կասեցվում է: Այն վերսկսվում է նշված տեսակի արձակուրդից վերադառնալու օրը:

11. Ատեստավորման ենթակա Պրոբացիայի ծառայողն ատեստավորման օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում է ատեստավորման անցկացման ժամկետի մասին:

12. Ատեստավորման արդյունքներով կայացվում է հետևյալ եզրակացություններից որևէ մեկը՝

1) ենթակա է հավելավճար հաշվարկելու,

2) ենթակա է շարունակելու հավելավճարի հաշվարկումը,

3) ենթակա չէ հավելավճար հաշվարկելու,

4) ենթակա չէ շարունակելու հավելավճարի հաշվարկումը:

13. Ատեստավորման մասնակցած այն Պրոբացիայի ծառայողները, որոնց վերաբերյալ կայացվել է սույն հոդվածի 12-րդ մասի 3-րդ կամ 4-րդ կետերով նախատեսված եզրակացությունը, ատեստավորման համար դիմելու ժամկետի ընթացքում ունեն ատեստավորման համար կրկին դիմելու ~~առնվազն~~ երկու հնարավորություն՝ համաձայն ~~համապատասխան~~ նախարարի կողմից հաստատված ժամանակացույցի:

14. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված եզրակացությունները հաստատվում են տվյալ Պրոբացիայի ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով:

15. Պրոբացիայի ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը ~~կամ~~ նաև դատական կարգով:

16. Ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի չափերը և վճարման կարգը սահմանվում են Կառավարության որոշմամբ: Սույն հոդվածի համաձայն՝ հավելավճար հաշվարկվելու դեպքում Պրոբացիայի ծառայողներին «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված լրավճարը և զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար նախատեսված հավելումները չեն հաշվարկվում:

## ~~Գ Լ ՈՒ Խ 6~~

## ~~ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԻ ՓՈԽԱԴՐԵԼԸ ԵՎ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ~~

**~~Հոդված 20. Պրոբացիայի ծառայողին այլ պաշտոնի փոխադրելը կամ տեղափոխելը~~**

~~1. Պրոբացիայի ծառայողի տեղափոխման, փոխադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Բաղաքացիական ծառայության մասին» օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:~~

~~2. Պրոբացիայի ծառայողը, ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված առանց իր համաձայնության կարող է փոխադրվել՝~~

~~1) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ պաշտոնի, այդ թվում՝ այլ տարածքային մարմնի պաշտոնի՝ տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո,~~

~~2) իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող խմբում ավելի ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.~~

~~3) զբաղեցրած պաշտոնին համարժեք այլ կամ ավելի ցածր պաշտոնի՝ առողջական վիճակից ելնելով՝ բժշկական եզրակացության հիման վրա:~~

~~3. Փորձաշրջանի մեջ գտնվող Պրոբացիայի ծառայողը կարող է փոխադրվել այլ պաշտոնի միայն փորձաշրջանի ավարտից հետո:~~

~~4. Պրոբացիայի ծառայության ծառայողներին սույն օրենքով սահմանված կարգով այլ պաշտոնի փոխադրում է Պպրոբացիայի ծառայության պետը:~~

## Գ Լ ՈՒ Խ ~~7~~6

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ*

**Հոդված 21. Պրոբացիայի ծառայողի իրավունքները**

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, Պ~~պ~~րոբացիայի ծառայողների հիմնական իրավունքներն են՝

1) որոշումներ ընդունելը.

2) իր լիազորությունների իրականացման նպատակով ցանկացած ժամանակ անարգել այցելելու պատժի կամ հարկադրանքի այլ միջոցների, էլեկտրոնային սարքավորումների տեղադրման և էլեկտրոնային հսկողության կիրառման վայրեր, ինչպես նաև դրանց կատարումն ապահովող իրավասու մարմիններ.

3) անարգել այցելել պրոբացիայի շահառուի մշտական կամ ժամանակավոր բնակության վայրեր, աշխատավայր և ուսումնական հաստատություն.

4) պրոբացիայի շահառուից պահանջել բացատրություններ, գործի համար անհրաժեշտ փաստաթղթեր.

5) կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.

6) պաշտոնի նշանակման արդյունքների բողոքարկումը.

7) Պրոբացիայի ծառայության կազմակերպման ու կատարելագործման հարցերի վերաբերյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին առաջարկությունների ներկայացումը:

2. Պրոբացիայի ծառայողն ունի օրենքով նախատեսված այլ իրավունքներ:

**Հոդված 22. Պրոբացիայի ծառայողի պարտականությունները**

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածով նախատեսված հիմնական պարտականություններից բացի, Պ~~պ~~րոբացիայի ծառայողի պարտականություններն են՝

1) սահմանված կարգով և ժամկետներում առաջարկությունները, դիմումները և բողոքները քննության առնելը և դրանց ընթացք տալը.

2) պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ աշխատելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները պահպանելը,

3) պրոբացիայի շահառուի անձնական տվյալների և փաստաթղթերի գաղտնիությունը պահպանելը և պաշտպանության ապահովելը, այդ թվում՝ Պրոբացիայի ծառայությունից ազատվելուց հետո.

4) վարքագծի կանոնները և ներքին կանոնակարգը պահպանելը:

2. Պրոբացիայի ծառայողն ունի օրենքով նախատեսված այլ պարտականություններ:

**Հոդված 23. Պրոբացիայի ծառայողի պահանջների կատարման պարտադիր լինելը**

1. Պրոբացիայի ծառայողի՝ իր իրավասության սահմաններում առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

2. Պրոբացիայի ծառայողի օրինական պահանջները չկատարելը կամ նրա պարտականությունների կատարմանը խոչընդոտելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ ~~8~~7

## *ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

**Հոդված 24. Օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմնի լիազորությունները Պ~~պ~~րոբացիայի ծառայության կազմակերպման գործում**

1. Օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմինը կազմակերպում, վերահսկում և մեթոդական ղեկավարում է իրականացնում Պ~~պ~~րոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ:

2. Նախարարը՝

1) կազմակերպում է և ընդհանուր վերահսկողություն է իրականացնում Պ~~պ~~րոբացիայի ծառայության գործունեության նկատմամբ.

2) արձակում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված հրամաններ և տալիս է պարտադիր կատարման ցուցումներ.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարում է նշանակումներ, կիրառում է կարգապահական և խրախուսանքի միջոցներ.

4) հաստատում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության կանոնադրությունը, Կառավարության հաստատմանն է ներկայացնում Պրոբացիայի ծառայության ներքին կանոնակարգը.

5) հաստատում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության ~~կառուցվածքը և~~ հաստիքացուցակ~~ներ~~ը.

6) քննում է Պ~~պ~~րոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում կասեցնում, փոփոխում, անվավեր, ~~կամ~~ ուժը կորցրած կամ չեղյալ է ճանաչում Պ~~պ~~րոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

7) սահմանում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության կողմից հաշվետվություններ ներկայացնելու կարգը և ժամկետները.

8) սահմանում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության չափահաս և անչափահաս շահառուների ռիսկերի և կարիքների գնահատման էլեկտրոնային գործիքների կիրառման կարգը.

9) հաստատում է Պ~~պ~~րոբացիայի ծառայողի այցելության արդյունքում, Պ~~պ~~րոբացիայի ծառայողին իրավասու մարմնի որոշմամբ սահմանված վայր մուտքն և ելքն արգելելու, Պ~~պ~~րոբացիայի ծառայողի պարտականությունների կատարմանը ցանկացած ձևով խոչընդոտելու դեպքում կազմվող արձանագրությունների ձևերը.

10) սահմանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու զեկույցը կազմելու, տրամադրելու կարգը և զեկույցի ձևը.

11) հաստատում է կամավորի հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևը և պայմանները.

12) իրականացնում է սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 25. Պրոբացիայի ծառայության լիազորությունները**

1. Պրոբացիայի ծառայությունը՝

1) ապահովում է «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարումը.

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարումը.

4) ապահովում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակված քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը.

5) տրամադրում է պրոբացիայի շահառուի վերաբերյալ զեկույցներ, ներկայացնում հաշվետվություններ և միջնորդություններ.

6) վերահսկողություն է իրականացնում պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ.

7) իրականացնում է հաշտարարություն.

8) իրականացնում է վերասոցիալականացման միջոցառումներ.

9) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

**Հոդված 26. Պրոբացիայի ծառայության պետը և տեղակալները**

1. Պրոբացիայի ծառայության պետը՝

1) ղեկավարում և հսկում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության գործունեությունը.

2) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև ն~~Ն~~ախարարի հրամանների և ցուցումների կատարումը.

3) ընդունում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության գործունեության կազմակերպմանն ուղղված որոշումներ, հրամաններ, տալիս է ցուցումներ և հանձնարարականներ.

4) առաջարկություններ է ներկայացնում նախարարին՝ Պրոբացիայի ծառայության կառուցվածքի և հաստիքացուցակի, Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետի տեղակալներին նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ.

5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Պ~~պ~~րոբացիայի ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս է լիազորագրեր Պ~~պ~~րոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար.

6) Պ~~պ~~րոբացիայի ծառայության անունից ներկայացնում է հաշվետվություններ.

7) միջնորդություն է ներկայացնում նախարարին՝ Պ~~պ~~րոբացիայի ~~ծառայողներիծառայության պետի~~ տեղակալներին խրախուսելու կամ նրանց նկատմամբ կարգապահական տույժեր կիրառելու մասին.

8) քննում է Պ~~պ~~րոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, ~~վերացնում,~~ անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում Պ~~պ~~րոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.

9) նշանակում է ծառայողական քննություններ.

10) ծառայողական քննության ժամանակահատվածում կարող է ժամանակավորապես դադարեցնել իր կողմից պաշտոնում նշանակված Պ~~պ~~րոբացիայի ծառայողի լիազորությունները.

11) խրախուսանքի կամ կարգապահական տույժի է ենթարկում Պ~~պ~~րոբացիայի ծառայողներին.

12) առաջարկություններ է ներկայացնում Պ~~պ~~րոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

13) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

~~2. Պրոբացիայի ծառայության պետը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար:~~

2. ~~3~~. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալները՝

1) համակարգում են Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետի կողմից իրենց հանձնարարված բնագավառներում կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների գործունեությունը.

2) Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետին ներկայացնում են տեղեկատվություն՝ իրենց հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի վերաբերյալ.

3) իրենց համակարգմանը հանձնարարված ոլորտի ստորաբաժանումների ղեկավարներին տալիս են ցուցումներ և հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում են հսկողություն.

4) Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետին առաջարկություններ են ներկայացնում պրոբացիայի ոլորտի օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

5) Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետին միջնորդություններ են ներկայացնում իրենց հանձնարարված ոլորտի ստորաբաժանումների ղեկավարներին խրախուսելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

6) իրենց վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես են գալիս Պ~~պ~~րոբացիայի ծառայության անունից, ներկայացնում նրա շահերը, տալիս են լիազորագրեր Պ~~պ~~րոբացիայի ծառայության անունից հանդես գալու համար.

**Հոդված 27. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի և կենտրոնական մարմնի մասնագիտական ստորաբաժանման ղեկավարը**

1. Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարումն իրականացնում է տարածքային մարմնի ղեկավարը: Տարածքային մարմնի ղեկավարը՝

1) ապահովում է տարածքային մարմնի բնականոն գործունեությունը.

2) համակարգում է Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ծառայողների աշխատանքները.

3) ապահովում է սույն օրենքի, Հայաստանի Հանրապետության այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, ինչպես նաև ~~Հայաստանի Հանրապետության արդարադատության~~ նախարարի, Պրոբացիայի ծառայության պետի հրամանների և

ցուցումների, Պրոբացիայի ծառայության պետի տեղակալների ցուցումների և հանձնարարականների կատարումը.

4) ընդունում է որոշումներ, տալիս է ցուցումներ.

5) իրեն վերապահված լիազորությունների սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս տարածքային մարմնի անունից, ներկայացնում նրա շահերը.

6) միջնորդություն է ներկայացնում Պ~~ռ~~ոբացիայի ծառայության պետին՝ տարածքային մարմնի ծառայողներին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

7) առաջարկություններ է ներկայացնում Պ~~ռ~~ոբացիայի ծառայության պետին Պ~~ռ~~ոբացիայի ծառայությանն առնչվող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.

8) պարբերաբար իրականացնում է տարածքային մարմնում առկա անձնական գործերի ուսումնասիրություններ, թերությունների կամ օրենսդրության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում անհապաղ միջոցառումներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ և այդ մասին հայտնում է Պրոբացիայի ծառայության պետին.

9) տարածքային մարմնի անունից ներկայացնում է հաշվետվություններ.

10) ներկայացնում է տարածքային մարմինը այլ մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում.

11) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Կենտրոնական մարմնի մասնագիտական ստորաբաժանման դեպքում սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններն այնքանով, որքանով կիրառելի են իրականացնում է մասնագիտական ստորաբաժանման ղեկավարը:

## Գ Լ ՈՒ Խ ~~9~~8

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ*

**Հոդված 28. Պրոբացիայի ծառայության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումը**

2. Պրոբացիայի ծառայության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովումն~~ման~~ իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

**Հոդված 29. Պրոբացիայի ծառայողի վարձատրությունը**

1. Պրոբացիայի յուրաքանչյուր ծառայող ունի ծառայության համար համարժեք վարձատրության իրավունք:

2. Պրոբացիայի ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:

**Հոդված 30. Պրոբացիայի ծառայողի կողմից տրանսպորտից օգտվելը**

1. Ծառայողական պարտականությունները կատարելիս Պ~~պ~~րոբացիայի ծառայողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու պայմանները, ինչպես նաև անձնական տրանսպորտը ծառայողական նպատակներով օգտագործելու ծախսերի հատուցման կարգը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 31. Պրոբացիայի ծառայողի համազգեստը, ծառայողական վկայականը**

1. Պրոբացիայի ծառայողին կարող է տրվել Պ~~պ~~րոբացիայի ծառայողի համազգեստ, որի նկարագիրը, այն տրամադրելու, կրելու կարգը և պայմանները, ինչպես նաև այն կրելու ժամկետները սահմանում է Ն~~Ն~~ախարարը:

2. Պրոբացիայի ծառայողին տրվում է սահմանված ձևի ծառայողական ~~Ֆ~~վկայական, որի ձևը և տրամադրելու կարգը սահմանում է նախարարը:

**Հոդված 32. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները**

1. Բացի «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ Պ~~պ~~րոբացիայի ծառայողն իրավունք չունի դատարանում իրականացնելու ներկայացուցչություն, բացառությամբ օրինական ներկայացուցիչ լինելու և ի պաշտոնե գործելու դեպքերի:

## Գ Լ ՈՒ Խ ~~10~~9

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ԺԱՄԱՆԱԿԸ*

### Հոդված 33. Պրոբացիայի ծառայողի աշխատաժամանակի տևողությունը

1. Պրոբացիայի ծառայողի համար սահմանվում է հնգօրյա աշխատանքային շաբաթ կամ հերթափոխային ծառայություն: Պրոբացիայի ծառայության պետի ներքին իրավական ակտով կարող է սահմանվել հերթապահություն:

2. Պրոբացիայի ծառայողը կարող է ներգրավվել արտաժամյա ծառայության՝ Պ~~պ~~րոբացիայի ծառայությունում անհետաձգելի կամ հրատապ խնդիրներ առաջանալու դեպքերում:

3. Պրոբացիայի ծառայողի արտաժամյա աշխատաժամանակի և աշխատաժամանակի տևողության վերաբերյալ կիրառելի են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված համապատասխան կարգավորումները:

### Հոդված 34. Պրոբացիայի ծառայողի ժամանակավոր անաշխատունակության դեպքում իր պաշտոնեական պարտականությունների կատարումից ժամանակավորապես ազատելը

1. Պրոբացիայի ծառայողը ժամանակավոր անաշխատունակության դեպքում առողջապահական հաստատության համապատասխան տեղեկանքի հիման վրա կարող է ժամանակավորապես ազատվել իր պաշտոնեական պարտականությունների կատարումից ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր:

## Գ Լ ՈՒ Խ 1~~1~~0

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼԸ*

**Հոդված 35. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի տեսակները**

1. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված խրախուսանքի տեսակները: Պրոբացիայի ծառայողների նկատմամբ խրախուսանք կիրառում է պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

2. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կարող է կիրառվել նաև արտահերթ կոչում այդ թվում իր զբաղեցրած պաշտոնի համապատասխան կոչումից ավելի բարձր կոչումի շնորհում խրախուսանքի տեսակը, որը Պ~~պ~~րոբացիայի ծառայողների նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել մեկ անգամ: Արտահերթ կոչումի շնորհում խրախուսանքի տեսակը կիրառում է կոչումը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսանքի տեսակը չի կարող կիրառվել Պրոբացիայի ծառայության պաշտոնին համապատասխանող՝ սույն օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված առավելագույն կոչում ունեցող Պրոբացիայի ծառայողի նկատմամբ:

4. Որպես «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված խրախուսանքի տեսակների այլընտրանք՝ երկարամյա ծառայության կամ ծառայողական պարտականությունները կամ հանձնարարականները (առաջադրանքները) բարեխղճորեն կատարելու համար Պ~~պ~~րոբացիայի ծառայողը կարող է պարգևատրվել կրծքանշանով:

5. Կրծքանշանի տեսակները, ձևերը և շնորհման կարգը սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:

**Հոդված 36. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը**

1. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով Պ~~պ~~րոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգապահական տույժերը:

2. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ որպես խիստ կարգապահական տույժ կարող է կիրառվել նաև կոչումի իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը՝ մեկ անգամ, կոչում շնորհած պաշտոնատար անձի կողմից:

3. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետը:

4. Պրոբացիայի ծառայության պետի նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է վարչապետը՝ սեփական նախաձեռնությամբ կամ Ն~~Ն~~ախարարի միջնորդությամբ:

5. Պրոբացիայի ծառայության պետի տեղակալի նկատմամբ կարգապահական տույժ կիրառում է Ն~~Ն~~ախարարը՝ սեփական նախաձեռնությամբ կամ Պրոբացիայի ծառայության պետի միջնորդությամբ:

~~6. Պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է Պպրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը:~~

**Հոդված 37. Պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնները խախտելու կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները**

1. Պրոբացիայի ծառայողների Պպրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնները խախտելու կամ հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու կամ շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու, անհամատեղելիության պահանջները չպահպանելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենքով:

## Գ Լ ՈՒ Խ 121

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ*

### Հոդված 38. Պրոբացիայի ծառայությունից ազատելը

1. Պրոբացիայի ծառայողը Պպրոբացիայի ծառայությունից ազատվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.

2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա.

3) սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը կամ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու կապակցությամբ.

4) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.

5) «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ տարվա ընթացքում կրկին կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված կարգապահական տույժերը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում կամ «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգապահական տույժը կիրառելու դեպքում կամ կոչման իջեցում մեկ աստիճանով կարգապահական տույժը և «Քաղաքացիական

ծառայության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված տույժերից որևէ մեկը մեկ տարվա ընթացքում կիրառելու դեպքում.

6) սույն օրենքով և «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները չպահպանելու դեպքերում՝ համապատասխան եզրակացության հիման վրա.

7) երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում.

8) սույն օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասում սահմանված ժամկետում կամ ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու իրավունք ձեռք չբերելու, ինչպես նաև հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերելու կամ սույն օրենքի 19-րդ հոդվածի 8-րդ մասին համապատասխան կրկնակի ատեստավորման արդյունքներով հավելավճար ստանալու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու իրավունք ձեռք չբերելու դեպքում կամ սույն օրենքի 19-րդ հոդվածի 13-րդ մասով սահմանված կարգով կրկնակի ատեստավորման համար չդիմելու դեպքում.

9) Պ~~պ~~րոբացիայի ծառայողի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.

10) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի համար տրամադրված արձակուրդը.

11) հանրային պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում.

12) սույն օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու դեպքում.

13) առողջական վիճակի պատճառով՝ ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում:

2. Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու Պ~~պ~~րոբացիայի ծառայողի լիազորությունները:

3. Պրոբացիայի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած՝ նրա մահվան կապակցությամբ, որի վերաբերյալ պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եռօրյա ժամկետում կազմում է համապատասխան ակտ:

4. Պրոբացիայի ծառայողին ծառայությունից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը կամ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու.~~սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված~~ դեպքերի:

**Հոդված 39. Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատելը**

1. Պրոբացիայի ծառայողը Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատվում է՝

1) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում՝ այլ պաշտոնի նշանակվելիս.

2) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե Պ~~պ~~րոբացիայի ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է տվյալ կառուցվածքային ստորաբաժանման հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.

3) առողջական վիճակի պատճառով՝ տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինության դեպքում.

4) դատարանի վճռի հիման վրա Պ~~պ~~րոբացիայի ծառայողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում:

2. Պրոբացիայի ծառայողին Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնից ազատում է նրան համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերի ի հայտ գալու դեպքում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

**Հոդված 40. Պրոբացիայի ծառայողի լիազորությունների ժամանակավորապես դադարեցումը**

1 Պրոբացիայի ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել ծառայողական քննության ժամանակահատվածում՝ վարձատրության պահպանմամբ, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննությանը:

2. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում նրա պաշտոնավարումը կարող է կասեցվել~~լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել (կասեցվել)~~ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

**Հոդված 41. Պրոբացիայի ծառայությունում տարիքային սահմանափակումները**

1. Պրոբացիայի ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվում 55 տարեկանը:

2. Պրոբացիայի ծառայության պետը՝ ն~~Ն~~ախարարի համաձայնությամբ, Պ~~պ~~րոբացիայի ծառայողի պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալու դեպքում Պ~~պ~~րոբացիայի ծառայողի ծառայության ժամկետը երկարաձգում է մինչև 5 տարի ժամկետով, եթե առկա չեն Պ~~պ~~րոբացիայի ծառայության պաշտոն զբաղեցբելու համար խոչընդոտ հանդիսացող օրենքով սահմանված հիմքեր:

3.~~ Պրոբացիայի ծառայությունից ազատումը,~~ Ս~~ս~~ույն ~~օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին~~հոդվածի 1-ին մասով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը լրանալու դեպքում~~ համապատասխան~~, Պրոբացիայի ծառայությունից ազատումը կատարվում է ~~սույն հոդվածի 1-ին մասով~~ սահմանված տարիքը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա 1-ին, եթե Պ~~պ~~րոբացիայի ծառայողի ծառայության ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով չի երկարաձգվել:

**Հոդված 42. Պրոբացիայի ծառայությունից ազատվածներին տրվող վճարումները և կենսաթոշակի ապահովումը**

1. Պրոբացիայի ծառայությունից ազատվածներին տրվող վճարումները, արտոնությունները, կենսաթոշակի ապահովումը և կենսաթոշակ նշանակելու պայմանները, տեսակները, կենսաթոշակի անցնելու կապակցությամբ տրվող դրամական օգնությունը և վճարումները, ծառայության ստաժի հաշվարկման կարգը, ինչպես նաև սոցիալական ապահովության հետ կապված մյուս հարաբերությունները սահմանվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով, «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

**Հոդված 43. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվը**

1. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գրանցվում են սույն օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով զբաղեցրած պաշտոնից ազատված Պրոբացիայի ծառայողները: Պրոբացիայի ծառայության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողները կադրերի ռեզերվում չեն գրանցվում:

2. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում Պրոբացիայի ծառայողի մեկանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը 6 ամիս է, սակայն ոչ ավելի, քան մինչև Պրոբացիայի ծառայողի պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալը:

3. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու առաջին երեք ամիսների համար Պրոբացիայի ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Այն դեպքում, երբ Պ~~պ~~րոբացիայի ծառայության կադրերի ռեզերվում գտնվելու ընթացքում Պրոբացիայի ծառայողն անձնական նախաձեռնությամբ ազատվում է Պ~~պ~~րոբացիայի ծառայությունից, ապա Պ~~պ~~րոբացիայի ծառայողի վարձատրությունն իրականացվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակաշրջանին համապատասխան:

4. Պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվը վարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 1~~3~~2

## *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ*

### Հոդված 44. Վեճերի լուծման համար դիմելու կարգը և ժամկետները

1. Պրոբացիայի ~~Ծ~~ծառայությունում փոխադրվելու, պաշտոնը կամ կոչումը իջեցվելու, կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում Պ~~պ~~րոբացիայի ծառայողը կարող է վերադասության կամ դատական կարգով, իսկ Պրոբացիայի ծառայությունից ազատվելու հետ չհամաձայնվելու դեպքում դատական կարգով բողոքարկել այդ իրավական ակտը՝ դրան ստորագրությամբ ծանոթանալու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում:

### Հոդված 45. Ծառայության կամ պաշտոնում վերականգնումը

1. Պրոբացիայի ~~Ծ~~ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված կամ փոխադրված Պ~~պ~~րոբացիայի ծառայողը ենթակա է իր ծառայությունում կամ պաշտոնում վերականգնման: Անհիմն կամ անօրինական իջեցված կոչումը ենթակա է վերականգնման:

### Հոդված 46. Կոչումի շնորհումը և ծառայության ժամկետի հաշվարկը ծառայության վերականգնումից հետո

1. Պրոբացիայի ~~Ծ~~ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված և հետագայում վերականգնված Պրոբացիայի ծառայողի անընդմեջ ծառայության ստաժում, հերթական կոչում շնորհելու ժամկետում, տոկոսային հավելավճարը հաշվարկելիս և կենսաթոշակ նշանակելիս հաշվարկվում է նաև անօրինական ազատումից մինչև վերականգնումն ընկած ժամանակահատվածը:

2. Պրոբացիայի ~~Ծ~~ծառայությունից կամ պաշտոնից անհիմն կամ անօրինական ազատված, ~~պաշտոնը կամ կոչումն իջեցված~~ Պրոբացիայի ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար

տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված միջին աշխատավարձի չափով՝ բացառությամբ կադրերի ռեզերվում գտնված ժամանակահատվածում ստացած վարձատրության:

3. Պրոբացիայի այն ծառայողներին, ովքեր ազատման պահից մինչև վերականգնվելն աշխատել են այլ կազմակերպություններում կամ զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ, ստանում են հատուցում, եթե այդ աշխատանքից կամ գործունեությունից ստացած ամսական եկամուտը ավելի քիչ է, քան նախկինում զբաղեցրած պաշտոնին համապատասխանող պաշտոնային դրույքաչափը: Հատուցումը վճարվում է նրանց՝ Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած վերջին պաշտոնի պաշտոնեական դրույքաչափի և Պրոբացիայի ծառայությունից ազատված ժամանակահատվածում ստացած ամսական եկամտի միջև եղած դրական տարբերության չափով:

## ԳԼՈՒԽ 143

## ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

### Հոդված 47. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը

1. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից: Հանձնաժողովի կազմում են Պրոբացիայի ծառայության պետի տեղակալներից մեկը՝ Պրոբացիայի ծառայության պետի որոշմամբ, Պրոբացիայի ծառայության մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից 3 Պրոբացիայի ծառայող՝ Պրոբացիայի ծառայության պետի որոշմամբ, և նԴախարարի նշանակած 3 ներկայացուցիչ: Պրոբացիայի ծառայողների էԷթիկայի հանձնաժողովի անդամները նշանակվում են առավելագույնը 3 տարի ժամկետով: Հանձնաժողովում նոր անդամների նշանակումները սույն հոդվածի սույն մասով սահմանված կարգով կատարվում են

հանձնաժողովի գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան նախորդող օրը:

2. Պրոբացիայի ծառայողների էԷթիկայի հանձնաժողովը նախագահում է հանձնաժողովի կազմում ընդգրկված Պրոբացիայի ծառայության պետի տեղակալը: Հանձնաժողովի նախագահը կատարում է աշխատանքների բաշխում հանձնաժողովի անդամների միջև:

3. Պրոբացիայի ծառայողների էԷթիկայի հանձնաժողովը որոշումներն ընդունում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամների ձայների հավասարության դեպքում քննարկման դրված հարցը համարվում է մերժված:

**Հոդված 48. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի գործունեությունը**

1. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովն աշխատանքները կազմակերպում է «Քաղաքացիական ծառայության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի համապատասխան սահմանված ծառայողական քննության կարգին համապատասխան, այնքանով որքանով (mutatis mutandis) կարգի դրույթները կիրառելի են Պ~~պ~~րոբացիայի ծառայության նկատմամբ:

2. Հանձնաժողովը ծառայողական քննության վերաբերյալ եզրակացություն ընդունում է՝ գումարելով հանձնաժողովի նիստ: Նիստն իրավազոր է, եթե դրան ներկա է Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի առնվազն հինգ անդամ:

3. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև վարքագծի ուղենիշային սկզբունքների և դրանցից բխող վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն և մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4. Պրոբացիայի ծառայողների էԷթիկայի հանձնաժողովը հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ է ներկայացնում համապատասխան պաշտոնատար անձին:

5. Պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ հարցերի ուսումնասիրության համար նշանակված ծառայողական քննությունն անցկացնում է Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը:

**Հոդված 49. ~~Պատասխանատվության առանձնահատկությունները պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում~~Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի եզրակացության քննարկումը~~.~~**

1. Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովը ծառայողական քննության արդյունքով ընդունում է~~ած~~ եզրակացությունն, որը անմիջապես ուղարկում է ծառայողական քննության կողմերին և տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

2. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եզրակացությունը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը և արդյունքների մասին ընդունում Պրոբացիայի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ չենթարկելու վերաբերյալ որոշում:

**Հոդված 50. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը**

1. Պրոբացիայի ծառայության անձնակազմի կառավարման գործառույթ իրականացնող ստորաբաժանումում նախատեսվում է բարեվարքության հարցերով կազմակերպչի քաղաքացիական ծառայության պաշտոն:

2. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1) Պպրոբացիայի ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն, ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու վերաբերյալ առաջարկություն.

2) իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների բացահայտում և վերապատրաստման ծրագրերի, ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ ծրագրերի մշակում.

3) Պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի պահանջով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ.

5) վարում է Պպրոբացիայի ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վիճակագրություն և նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

6) Պպրոբացիայի ծառայողներին տրամադրում է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք:

## ԳԼՈՒԽ 1454

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒԺ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ԳՈՐԾԱԴՐԵԼԸ

**Հոդված 51. Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ գործադրելու իրավունքը**

1. Պրոբացիայի ծառայողը իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ՝ ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ իրեն ցույց տրված դիմադրությունը կամ ~~ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ~~ իր վրա կատարված հարձակումը կանխելու դեպքում:

2. Արգելվում է հատուկ միջոցների գործադրումը հղիության ակնհայտ նշաններ ունեցող կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և Պ~~պ~~րոբացիայի ծառայողի կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:

3. Պրոբացիայի ծառայողների կողմից գործադրվող հատուկ միջոցների ցանկը սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 52. Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ գործադրելու պայմաններն ու սահմանները**

1. Պրոբացիայի ծառայողը, սույն օրենքի 51-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով, իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ, եթե այլ միջոցները չեն ապահովում նրա վրա դրված պարտականությունների կատարումը:

2. Ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ գործադրելիս Պ~~պ~~րոբացիայի ծառայողը պարտավոր է՝

1) նախազգուշացնել դրանք գործադրելու մտադրության մասին՝ անձին բավարար ժամանակ տրամադրելով իր պահանջների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հապաղումն անմիջական վտանգ է ստեղծում Պ~~պ~~րոբացիայի ծառայողի կյանքի կամ առողջության համար.

2) դրանք գործադրել իրավախախտման կամ դիմադրության վտանգավորության բնույթին և աստիճանին համաչափ.

3) մարմնական վնասվածքներ ստացած անձանց ցույց տալ առաջին օգնություն:

3. Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման դեպքում Պ~~պ~~րոբացիայի ծառայողը անմիջապես զեկուցում է վերադասության կարգով:

4. Ֆիզիկական ուժի և հատուկ միջոցների գործադրման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին Պ~~պ~~րոբացիայի ծառայության պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության և դատախազության համապատասխան մարմիններին:

5~~4~~. Ֆիզիկական ուժը և հատուկ միջոցները՝ լիազորությունները գերազանցելով գործադրելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

## Գ Լ ՈՒ Խ 15~~65~~

## *ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**Հոդված 53. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:~~ 2024 թվականի հունվարի մեկից:

**Հոդված 54. Սույն օրենքից բխող իրավական ակտերն ընդունելը**

1. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

**Հոդված 55. Պրոբացիայի ծառայողների առաջին կատարողականի գնահատումը**

1. Պրոբացիայի ծառայողների առաջին կատարողականի գնահատումն իրականացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամիս հետո:

**Հոդված 56. Նախկինում կիրառված կարգապահական տույժերը հաշվի առնելը**

1. Պրոբացիայի ծառայողների նկատմամբ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կիրառված կարգապահական տույժերը պահպանվում են:

2. Պրոբացիայի ծառայողին սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի հիմքով Պրոբացիայի ծառայությունից ազատելիս հաշվի են առնվում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նրա նկատմամբ կիրառված և սահմանված կարգով չմարված կարգապահական տույժերը:

**Հոդված 57. Նախկինում շնորհված կոչումները և դասային աստիճանները**

1. Պրոբացիայի ծառայությունում ծառայողներին նախկինում շնորհված կոչումները և դասային աստիճանները, անկախ նրանց զբաղեցրած պաշտոններից, համապատասխանեցվում են սույն օրենքով սահմանված կոչումներին: Դասային աստիճան (կոչում) չունեցող Պրոբացիայի ծառայողներին սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ~~վեց~~ 3 ամսվա ընթացքում շնորհվում է զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված սկզբնական ~~նվազագույն~~ կոչումը: Պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխան սկզբնական կոչումները սահմանում է կառավարությունը:

**Հոդված 58. Պրոբացիայի ծառայության ստաժի հաշվարկը**

1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Պ~~պ~~րոբացիայի ծառայողների, կամ ազատազրկման հետ կապված կամ ազատազրկման հետ չկապված պատիժներ կատարած կամ դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացրած ծառայողների և աշխատակիցների աշխատանքային ստաժը հաշվարկվում է Պ~~պ~~րոբացիայի ծառայության ստաժի մեջ:

**Հոդված 59.** ***Պրոբացիայի քաղաքացիական ծառայողների հետագա պաշտոնավարումը***

~~Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության քաղաքացիական ծառայողներին Պրոբացիայի ծառայողներ համարելը և ատեստացիան~~

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք շարունակում են պաշտոնավարել և իրականացնել Պրոբացիայի ծառայությանը վերապահված գործառույթները մինչև Արդարադատության նախարարի հրամանով սահմանված կարգով որակավորման ստուգման արդյունքներով Պրոբացիայի ծառայության պաշտոնների նշանակվելը:
2. Պրոբացիայի ծառայության պաշտոններում նշանակումները կատարվում են որակավորման ստուգման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Որակավորման ստուգումը չանցած ծառայողներն ազատվում են զբաղեցրած պաշտոններից:
3. Որակավորման ստուգումն անցկացվում է Արդարադատության նախարարի հրամանն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում:
4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Արդարադատության նախարարը 20 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է վերապատրաստման կարգը:

~~1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կառուցվածքային ստորաբաժանումներում ծառայող Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Պրոբացիայի ծառայության քաղաքացիական ծառայողները համարվում են Պրոբացիայի ծառայողներ և նշանակվում են իրենց զբաղեցրած պաշտոնին համապատասխան Պրոբացիայի ծառայության պաշտոնի և ենթակա են ատեստավորման Պրոբացիայի ծառայության պաշտոն առաջին անգամ զբաղեցրած Պրոբացիայի ծառայողների համար սահմանված կարգով և ժամկետներում:~~

**Հոդված 60. Պրոբացիայի ծառայության ծառայողների աշխատավարձի պահպանումը**

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Պ~~պ~~րոբացիայի ծառայության քաղաքացիական ծառայողները Պ~~պ~~րոբացիայի ծառայության համապատասխան պաշտոնի նշանակվելիս չեն կարող ստանալ ավելի ցածր աշխատավարձ այն աշխատավարձի չափից, որը ստացել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ:

**Հոդված 61. Պրոբացիայի ծառայողների~~Պրոբացիայի ծառայության~~ էթիկայի հանձնաժողովի առաջին կազմը**

~~1.~~ Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ձևավորվող Պ~~պ~~րոբացիայի ծառայողների~~ության~~ էթիկայի հանձնաժողովի առաջին կազմում Պրոբացիայի ծառայության մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից 3 ծառայողները և ն~~Ն~~ախարարի նշանակած 3 ներկայացուցիչները կազմում ընդգրկվում են մեկ, երկու և երեք տարի ժամկետներով, նշանակող պաշտոնատար անձի որոշմամբ:

# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-673-03.10.2023-ՊԻ-011/1), «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-673[1]-03.10.2023-ՊԻ-011/1), «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-673[2]-03.10.2023-ՊԻ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-673[3]-03.10.2023-ՊԻ-011/1) ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-673[4]-03.10.2023-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| № | *Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը* | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ***Կառավարություն*** | Նախագծի 4-րդ հոդված 2 մաս | Նկատի ունենալով, որ գլխավոր քարտուղարի պաշտոնի նշանակման և ազատման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Կառավարչական իրավահարաբերությունների | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կարգավորման մասին» օրենքով, առաջարկում ենք՝ «որին օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը» բառերը փոխարինել «որն պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով» բառերով: | | |
| **2.** | ***Կառավարություն*** | Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս | Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը հստակեցնելու նպատակով «այնքանով բառից հետո անհրաժեշտ է լրացնել «որքանով» բառը: | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրավում: | Ընդունվել է: |
| **3.** | ***Կառավարություն*** | Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ | Առաջարկում ենք, Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «պաշտոննոր՝» բառից հետո լրացնել «պրոբացիայի ծառայության մասնագետ» բառերը: | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **4.** | ***Կառավարություն*** | Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մաս | Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթն ահրաժեշտ է խմբագրել, համապատասխանեցնելով այլ ենթակա մարմիններում /ծառայություններում/ շնորհվող կոչումների համար սահմանված ժամկետներին, օրինակ «Հարկադիր կատարումն ապահովող ծառայության» մասին օրենքով սահմանված կարգավորումներին: | Ընդունվել է: Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| **5.** | ***Կառավարություն*** | Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մաս | Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասում «զբաղեցրել է» բառից հետո անհրաժեշտ է լրացնել «Պրոբացիայի ծառայության պետի պաշտոնը կամ» բառերը | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է: |
| **6.** | ***Կառավարություն*** | Նախագծի 57-րդ հոդվածի 1-ին մաս | Նկատի ունենալով, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, ինչպես նաև քրեակատարողական ծառայության սկզբնական կոչումները սահմանված են ՀՀ կառավարության կողմից, առաջարկում ենք նույն մոտեցումը կիրառել նաև պրոբացիայի ծառայության համար, մասնավորապես՝ Նախագծի 57-րդ | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածի 1-ին մասում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝ «Պրոբացիայի ծառայության պաշտոններին համապատասխան սկզբնական կոչումները սահմանում է Կառավարությունը:» | | |
| **7.** | ***Կառավարություն*** | Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս | Առաջարկում ենք «իրավասու մարմնում» բառերը փոխարինել «իրավասու պետական մարմնում» բառերով՝ հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը, այն է. «պրոբացիայի ծառայություն՝ պրոբացիա իրականացնող իրավասու պետական մարմին.»: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավադրույթից, որի համաձայն. «Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ:»: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **8.** | ***Կառավարություն*** | Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս | Առաջարկում ենք «Պրոբացիայի մասին» օրենքի կրճատ անվանման հիշատակումից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը:»:<br>Նույն դիտարկումը վերաբերելի նաև Նախագծի 48-րդ հոդվածի 1-ին մասում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի և «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով «Պրոբացիայի մասին» օրենքում լրացվող նոր՝ 1.1-ին հոդվածի 2-րդ | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասում «Պրոբացիայի ծառայության մասին» օրենքի հիշատակմանը: | | |
| **9.** | ***Կառավարություն*** | Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մաս | Հարկ ենք համարում նշել, որ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ մասում սահմանված է պետական կառավարման համակարգի մարմնի կանոնադրության բովանդակությունը, որի համաձայն. «15. Պետական կառավարման համակարգի մարմնի կանոնադրությունը, ի թիվս այլնի, ներառում է պետական կառավարման համակարգի մարմնի՝ 1) անվանումը և գտնվելու վայրը, 2) կառավարման և ղեկավարման կազմակերպումը, 3) կառուցվածքը:»: Այսպես՝ պրոբացիայի ծառայությունը լինելով նախարարությանը ենթակա մարմին ներառված է պետական կառավարման համակարգի մարմինների մեջ, հետևաբար | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պրոբացիայի ծառայության կանոնադրությունը, ի թիվս այլնի, ներառում է նաև պրոբացիայի ծառայության կառուցվածքը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ նշենք, որ Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմնի ղեկավարի կողմից պրոբացիայի ծառայության կառուցվածքի հաստատման վերաբերյալ նշման անհրաժեշտությունը բացակայում է:<br>Նույն դիտարկմամբ առաջարկում ենք վերանայել նաև Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում սահմանված պրոբացիայի ծառայության կառուցվածքի հաստատման վերաբերյալ նախարարի լիազորությունը: | | |
| **10.** | ***Կառավարություն*** | Նախագծի ամբողջ տեքստում միևնույն միտքն արտահայտելիս | Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետությունում պրոբացիա իրականացնող իրավասու մարմին» երկար արտահայտությանը տրվել է | Ընդունվել է:<br>Նախագծի ամբողջ տեքստում կատարվել են համապատասխան | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | կիրառվում են տարբեր բառեր, հասկացություններ և տերմիններ | կրճատ տարբերակ, այն է. «(այսուհետ՝ Պրոբացիայի ծառայություն)»: Մինչդեռ Նախագծի ամբողջ հետագա տեքստում կիրառվում են նաև «պրոբացիայի ծառայություն» և «ծառայություն» ձևակերպումները:<br>Նախագծի ամբողջ տեքստում կիրառվում են «պրոբացիայի ծառայող», «Պրոբացիայի ծառայող», «պրոբացիայի ծառայության ծառայող» և «ծառայող» ձևակերպումները:<br>Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասում «օրենսդրությամբ սահմանված ենթակայությանը համաձայն համապատասխան մարմնի ղեկավար» երկար արտահայտությանը տրվել է կրճատ տարբերակ, այն է. «(այսուհետ՝ նախարար)»: Մինչդեռ Նախագծի ամբողջ հետագա տեքստում կիրառվում է նաև «Նախարար», «համապատասխան նախարար», «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար» եզրույթները:<br>Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ | փոփոխություններ: | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասում, 8-րդ հոդվածի 2-րդ մասում և 36-րդ հոդվածի 4-րդ մասում կիրառվում է «վարչապետ» եզրույթը, մինչդեռ Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետ» ձևակերպումը:<br>Նախագծի ամբողջ տեքստում կիրառվում են «պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողով», «էթիկայի հանձնաժողով», «պրոբացիայի ծառայության էթիկայի հանձնաժողով» և «հանձնաժողով» եզրույթները:<br>Նախագծում կիրառվում են «պրոբացիայի ծառայության պետ», «Պրոբացիայի ծառայության պետ» և «ծառայության պետ» ձևակերպումները:<br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տերմիններ:<br>2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:»:<br>Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծում կիրառել նորմատիվ իրավական ակտերով սահմանված հասկացություններ, ինչպես նաև միևնույն միտքն արտայատելիս գործածել միևնույն բառերը՝ որոշակի հերթականությամբ: | | |
| **11.** | ***Կառավարություն*** | Նախագծի 3-րդ հոդված | Նախագծի 3-րդ հոդվածում սահմանված է պրոբացիայի ծառայության համակարգը, որի 1-ին մասի համաձայն՝ «1.Պրոբացիայի ծառայությունը կազմված է կենտրոնական մարմնից և տարածքային մարմիններից:»:<br>Վերոնշյալ իրավադրույթում սահմանված է պրոբացիայի ծառայության կազմում ընդգրկված մարմինների սպառիչ ցանկ: Մինչդեռ Նախագծում բացակայում են պրոբացիայի ծառայության | Ընդունվել է:<br><br>Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կենտրոնական մարմնի, ինչպես նաև տարածքային մարմինների կազմի վերաբերյալ կարգավորումներ: Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում նշում է կատարվում նաև պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի հիմնական մասնագիտական ստորաբաժանումների մասին, Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է, որ պրոբացիայի ծառայությունն ունի նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ: Բացի այդ Նախագծում սահմանված են նաև պրոբացիայի ծառայության պետի և նրա տեղակալների վերաբերյալ իրավադրույթներ:<br>Նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներում սահմանված իրավակարգավորումների համադրության վերլուծությունից հասկանալի չէ՝ պրոբացիայի ծառայության համակարգի կազմում ընդգրկվող մարմինների և պրոբացիայի ծառայության կազմում ընդգրկվող մարմինների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տարբերակումը:<br>Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծում պրոբացիայի ծառայության կազմում և պրոբացիայի ծառայության համակարգում սահմանված մարմինների վերաբերյալ իրավադրույթները: | | |
| **12.** | ***Կառավարություն*** | Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ հոդվածները, Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր | Նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ հոդվածները խնդրահարույց են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, այն է՝ «Արգելվում է կատարել՝ (..) շրջանաձև հղումներ, երբ նորմը, որին հղում է կատարվում, իր հերթին հղում է կատարում նախորդ նորմին», տեսանկյունից, քանզի Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը հղում են կատարում մեկը մյուսին:<br>Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը առաջացնում են շփոթ նաև ընդհանուր նորմի և հատուկ նորմի տարբերակման տեսանկյունից: Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասը հանդիսանում է տվյալ հարաբերությունը | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:<br>Նախագիծը խմբագրվել է հետևյալ ձևակերպմամբ.<br>«3. Արդարադատության լեյտենանտ կոչումը սկզբնական կոչումն է եւ շնորհվում է Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Պրոբացիայի ծառայությունում մյուս պաշտոններում նշանակվելիս | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կարգավորող ընդհանուր կարգավորում պրոբացիայի ծառայությունում նշանակվելիս շնորհվող սկզբնական կոչման վերաբերյալ:<br>Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասը հանդիսանում է այդ նորմից բացառություն, որը կարգավորում է նախատեսում պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակվելիս այլ պետական մարմիններում ծառայություն անցած անձանց կոչումների պահպանման վերաբերյալ: Խնդիրը կայանում է նրանում, որ շարադրման այսպիսի հերթականությունը առաջացնում է շփոթ այդ նորմերի տարբերակման և կարգավորվող հարաբերության ծավալի վերաբերյալ:<br>Ուստի առաջարկում ենք նշված շփոթը, ինչպես նաև արգելվող շրջանաձև հղումը վերացնելու նպատակով Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը շարադրել հետևյալ կերպ.<br>«3. Արդարադատության լեյտենանտ կոչումը սկզբնական կոչումն է և շնորհվում է պրոբացիայի | ծառայողին շնորհվում է Պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնին համապատասխանող կոչում:<br>4. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան կամ որակավորման դաս ունեցող քաղաքացիներին Պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում Պրոբացիայի ծառայությունում իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում՝ պաշտոնի նշանակվելուց | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծառայությունում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի: Պրոբացիայի ծառայությունում մյուս պաշտոններում նշանակվելիս ծառայողին շնորհվում է պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնին համապատասխանող կոչում:<br>4. Այլ պետական մարմնում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան կամ որակավորման դաս ունեցող քաղաքացիներին պրոբացիայի ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ որակավորման դասին համապատասխան կոչում:»: | հետո՝ եռօրյա ժամկետում:»: | |
| **13.** | ***Կառավարություն*** | Նախագծի 3-րդ գլուխ | Նախագծի 3-րդ գլուխը վերնագրված է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ»: Մինչդեռ Նախագծի 3-րդ գլխում ներառված է «Պրոբացիայի ծառայողի | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անձնական գործը» վերտառությամբ Նախագծի 7-րդ հոդվածը, որը նախատեսում է կարգավորումներ պրոբացիայի ծառայողի անձնական գործի վարման ընթացակարգի մասին: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածի գլխի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված պահանջից, այն է. «Բաժիններն ու գլուխները ունենում են վերնագրեր, որոնք պետք է համապատասխանեն դրանց բովանդակությանը:»:<br>Նախագծի 7-րդ հոդվածում առաջարկում ենք նաև կատարել շարադասական շտկում, մասնավորապես, «այնքանով,» բառից հետո լրացնել «որքանով» բառը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **14.** | ***Կառավարություն*** | Նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մաս | Նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Պրոբացիայի ծառայությունում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր այլ պաշտոնի նշանակվելուց հետո պրոբացիայի ծառայողի ատեստավորման արդյունքները պահպանվում են, իսկ մրցույթի արդյունքներով առաջխաղացմամբ պաշտոնի նշանակվելիս ծառայողն ենթակա է ատեստավորման: Մինչև հավելավճար հաշվարկելու նպատակով ատեստավորվելն՝ առաջխաղացմամբ պաշտոնի նշանակված ծառայողը պահպանում է նախորդ պաշտոնում հաշվարկված ատեստավորման արդյունքները: Հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ Պրոբացիայի ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում, ծառայողներն ատեստավորման ենթակա չեն, բացառությամբ՝ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալու դեպքերի:»: | Ընդունվել է: Դրույթը հստակեցվել է, սահմանվել է, որ ատեստավորման արդյունքները պահպանվում են: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Վերոնշյալ իրավակարգավորումը սահմանում է հաստիքների կրճատման, կառուցվածքային փոփոխության դեպքում՝ պրոբացիայի ծառայությունում այլ պաշտոնի նշանակվելիս, այդ թվում՝ պաշտոնի մեկ աստիճանով իջեցման դեպքում պրոբացիայի ծառայողների ատեստավորման ենթակա չլինելու կանոնը: Մինչդեռ վերը մեջբերված դրույթից հասկանալի չէ՝ արդյոք նշված դեպքերում ծառայողը պահպանում է հավելավճար հաշվարկելու կամ հավելավճարի հաշվարկումը շարունակելու ձեռք բերած իրավունքը: Առաջարկում ենք Նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասում հստակեցնել վերոնշյալ դրույթը՝ քննարկվող հատվածով: | | |
| **15.** | ***Կառավարություն*** | Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մաս | Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանված է. «9. Հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան | Ընդունվել է:<br><br>Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | արձակուրդից վերադառնալուց երեք ամիս հետո: Սույն մասով նախատեսված ծառայողներն ատեստավորման համար կարող են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողն ենթակա է ատեստավորման ոչ շուտ, քան ծառայության անցնելուց երկու ամիս հետո:»: Վերոնշյալ իրավակարգավորման երկրորդ նախադասությամբ նշված է, որ այդ դրույթում նշված ծառայողներն ատեստավորման համար կարող են դիմել եռամսյա ժամկետի ավարտից հետո երեք տարվա ընթացքում: Հարկ է նկատել, որ քննարկվող նորմում սահմանվում են ինչպես հղիության և ծննդաբերության, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդում գտնվող ծառայողների, այնպես էլ արձակուրդում կամ գործուղման մեջ գտնվող կամ ժամանակավոր անաշխատունակ ծառայողների | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ատեստավորման վերաբերյալ կարգավորումներ: Ընդ որում՝ նշված դեպքերում ատեստավորման համար սահմանված են տարբեր ժամկետներ, մասնավորապես՝ ծառայության անցնելուց երեք ամիս հետո և երկու ամիս հետո, մինչդեռ քննարկվող նորմի երկրորդ նախադասությամբ նշում է կատարված միայն եռամսյա ժամկետի վերաբերյալ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ նախադասությամբ կիրառված են «Սույն մասով նախատեսված ծառայողներ» բառերը՝ նշենք, որ այն տարածվում է ոչ միայն նորմի առաջին, այլև երրորդ նախադասությամբ նշված դեպքերի վրա: Հետևաբար առաջարկում ենք վերանայել Նախագծի 19-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ նախադասության նույն դրույթով նախատեսված պրոբացիայի ծառայողների ատեստավորման համար դիմելու ժամկետի սկզբի մասին նշումը՝ հաշվի առնելով նաև երկամսյա | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետը: | | |
| **16.** | ***Կառավարություն*** | Նախագծի 19-րդ հոդվածի 13-րդ մաս | Նախագծի 19-րդ հոդվածի 13-րդ մասում սահմանվում է ատեստավորման մասնակցած ծառայողների ատեստավորման համար կրկին դիմելու առնվազն երկու հնարավորության վերաբերյալ իրավադրույթ: Մինչդեռ «առնվազն» եզրույթի կիրառումն իրավական շփոթ է առաջացնում, մասնավորապես՝ հասկանալի չէ՝ ինչպես է որոշվում ո՞ր դեպքերում պրոբացիայի ծառայողը կարող է ատեստավորման համար դիմել ևս երկու անգամ, ո՞ր դեպքերում պրոբացիայի ծառայողը կունենա հնարավորություն երկու անգամից ավել դիմելու ատեստավորման համար:<br>Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 19-րդ հոդվածի 13-րդ մասում սահմանված իրավադրույթն իրավական որոշակիության | Ընդունվել է:<br>Առնվազն բառը հանվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | տեսանկյունից, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ: | | |
| **17.** | ***Կառավարություն*** | Նախագծի 19-րդ հոդվածի 15-րդ մաս | Նախագծի 19-րդ հոդվածի 15-րդ մասում սահմանված է. «15. Պրոբացիայի ծառայողը պարտադիր ծանոթացվում է ատեստավորման արդյունքներին և կայացված եզրակացությանը: Պրոբացիայի ծառայողն իրավունք ունի վերադասության կարգով բողոքարկելու ատեստավորման արդյունքները և կայացված եզրակացությունը՝ դրանց ծանոթանալու օրվանից հետո ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում կամ դատական կարգով:»: Այսպես՝ վերոգրյալ դրույթի շարադասությունից բխում է, որ «վերադասության կարգով» բառերը վերաբերում են նաև դատական կարգով բողոքարկմանը, հետևաբար առաջարկում ենք քննարկվող նախադասությունը խմբագրել: | Ընդունվել է:<br>Նախագծի 19-րդ հոդվածի 15-րդ մասը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **18.** | ***Կառավարություն*** | Նախագծի 6-րդ գլուխ | Նախագծի 6-րդ գլուխը բաղկացած է մեկ հոդվածից: Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված է. «Օրենսդրական ակտերում բովանդակությամբ համասեռ հոդվածները միավորվում են գլուխներում:»: Հիմք ընդունելով մեջբերված դրույթն՝ առաջարկում ենք Նախագծում ապահովել համասեռ մի քանի հոդվածի միավորումը Նախագծի գլուխներում | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **19.** | ***Կառավարություն*** | Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մաս | 15. Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Պրոբացիայի ծառայողի՝ առաջադրած պահանջների կատարումը պարտադիր է բոլոր պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար:»: Նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասում հստակություն ապահովելու, իրավական որոշակիության բարձր մակարդակ երաշխավորելու և հետագա պրակտիկ խնդիրներից | Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն. | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | խուսափելու նպատակով առաջարկում ենք «ծառայողի՝» բառից հետո լրացնել «իր իրավասության սահմաններում» արտահայտությունը: | | |
| **20.** | ***Կառավարություն*** | Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ | Նախագծի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ «Նախարարը՝<br>( )<br>6) քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում կասեցնում, փոփոխում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.»:<br>Հարկ ենք համարում նշել, որ «Նորմատիվ իրավական ակտերի | Ընդունվել է:<br><br>Նախագծով նախատեսվել է նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները չեղյալ ճանաչելու լիազորություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցման դեպքերը, համաձայն որի. « Նորմատիվ իրավական ակտի, բացառությամբ Սահմանադրության, գործողությունը դադարեցվում է՝<br>1) նորմատիվ իրավական ակտն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում.<br>2) նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչվելու դեպքում.<br>3) նորմատիվ իրավական ակտը չեղյալ ճանաչվելու դեպքում:»:<br>«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. Նորմատիվ իրավական ակտը չեղյալ է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտով, եթե այլևս նպատակահարմար չէ ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ակտի կիրառումը:»:<br>Առաջարկում ենք Նախագծի 24-րդ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետում նախարարին լիազորել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով և իր լիազորությունների սահմաններում չեղյալ ճանաչել պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները: | | |
| **21.** | ***Կառավարություն*** | Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ | Նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում առաջարկում ենք «քրեաիրավական ներգործության կատարումը» բառերը փոխարինել «քրեաիրավական ներգործության միջոցի կատարումը» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում սահմանված «քրեաիրավական ներգործության միջոց» հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | դրույթը: | | |
| **22.** | ***Կառավարություն*** | Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ | Նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն. «Պրոբացիայի ծառայության պետը՝<br>( )<br>8) քննում է պրոբացիայի ծառայողների որոշումների, գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում, վերացնում, անվավեր, չեղյալ կամ ուժը կորցրած է ճանաչում պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանները, որոշումներն ու ցուցումները.»:<br>Հարկ ենք համարում նշել, որ | Ընդունվել է:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն. | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պրոբացիայի ծառայության պաշտոնատար անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանների, որոշումների ու ցուցումների վերացման լիազորության վերապահումը պրոբացիայի ծառայության պետին խնդրահարույց է հետևյալ հիմնավորմամբ.<br>Նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում էր իրավական ակտերի գործողության դադարեցման դեպքերը, որի 2-րդ կետում սահմանված էր իրավական ակտը վերացվելու դեպքը: Նույն օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված էր իրավական ակտի վերացման հասկացությունը, այն է. «1. Իրավական ակտը վերացված է ճանաչվում, եթե վերացել է դրանով կարգավորվող հարաբերությունների իրավական կարգավորման | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անհրաժեշտությունը, և այդ իրավական ակտի գործողությունը դադարեցնելու մասին իրավական ակտին տրվելու է հետադարձ ուժ:»: Մինչդեռ ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքը չի նախատեսում նորմատիվ իրավական ակտի վերացումը որպես նորմատիվ իրավական ակտի գործողության դադարեցման դեպքը: Հիմք ընդունելով ներկայումս գործող օրենսդրական կարգավորումներն՝ առաջարկում ենք վերանայել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող, այլոց իրավունքները խախտող կամ սահմանափակող հրամանների, որոշումների ու ցուցումների վերացման լիազորության վերապահումը պրոբացիայի ծառայության պետին՝ բացառելով օրենսդրությամբ չսահմանված հասկացության կիրառումը, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել հապատասխան վարքագիծ: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **23.** | ***Կառավարություն*** | Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մաս | Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պրոբացիայի ծառայության պետը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար:»:<br>Նշված կարգավորումը խնդրահարույց է, քանզի «պատասխանատվություն» եզրույթը իրավագիտությունը դիտարկում է որպես անձի համար առաջացող անբարենպաստ հետևանքներ՝ որոշակի իրավունքների կամ ազատությունների սահմանափակում կամ որոշակի պարտականության առաջադրում: Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասը պրոբացիայի ծառայության պետին առաջադրում է որոշակի պարտականություն՝ պրոբացիայի խնդիրների կատարում, և այդ պարտականության կատարումն ապահովում պատասխանատվության սպառնալիքով: Սակայն Նախագիծը չի պարունակում կարգավորումներ այդպիսի պատասխանատվության՝ | Ընդունվել է:<br>Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասը հանվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | անբարենպաստ հետևանքների տեսակի, բնույթի, չափի, այն կիրառող մարմնի և այդ պատասխանատվությունը որոշակիացնող այլ հատկանիշների վերաբերյալ:<br>Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասը խնդրահարույց է նաև այն տեսանկյունից, որ պրոբացիայի ծառայության պետը պատասխանատվություն է կրում պրոբացիայի ծառայության խնդիրների իրականացման համար, սակայն այդ խնդիրները սահմանող նորմը, մասնավորապես «Պրոբացիայի մասին» օրենքի 4-րդ հոդածի 2-րդ մասը «Պրոբացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով ճանաչվում է ուժը կորցրած: Ուստի տվյալ պարագայում անհասկանալի է, թե ինչ խնդիրների իրականացման պարտականություն է առաջադրվում պրոբացիայի ծառայության պետին:<br>Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | մասը լրամշակել՝ առաջացած բաց խնդիրները լուծելու և անորոշությունները վերացնելու նպատակով: | | |
| **24.** | ***Կառավարություն*** | Նախագծի 27-րդ հոդված | 21. Նախագծի 27-րդ հոդվածը վերնագրված է «Պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարը», որի 1-ին մասում սահմանված են պրոբացիայի ծառայության տարածքային մարմնի ղեկավարի լիազորությունները: Նույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված է պրոբացիայի ծառայության կենտրոնական մարմնի ղեկավարի լիազորությունների վերաբերյալ իրավադրույթ: Առաջարկում ենք Նախագծի 27-րդ հոդվածի վերանգիրը համապատասխանեցնել բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը, այն է. «Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների | Ընդունվել է:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բովանդակությանը:» | | |
| **25.** | ***Կառավարություն*** | Նախագծի 31-րդ հոդվածի վերնագիր, 2-րդ մաս | 22. Նախագծի 31-րդ հոդվածի վերնագրում և 2-րդ մասում առաջարկում ենք «վկայական» բառից առաջ լրացնել «ծառայողական» բառը՝ հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» օրենքում կիրառվող հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն. | Ընդունվել է: |
| **26.** | ***Կառավարություն*** | Նախագծի 36-րդ հոդված | Նախագծի 36-րդ հոդվածը վերնագրված է «Պրոբացիայի ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը»: Մինչդեռ նույն հոդվածի 6-րդ մասում սահմանված իրավադրույթը վերաբերում է պրոբացիայի ծառայության էթիկայի հանձնաժողովին: Հետևաբար առաջարկում ենք Նախագծի 36-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված պահանջը: | | |
| **27.** | ***Կառավարություն*** | Նախագծի 12-րդ գլուխ | 24. Նախագծի 12-րդ գլուխը վերնագրված է «ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ»: Հարկ է նկատել, որ Նախագծի 12-րդ գլխում ներառված են նաև պրոբացիայի ծառայությունում տարիքային սահմանափակումների, պրոբացիայի ծառայությունից ազատվածներին տրվող վճարումների և կենսաթոշակի ապահովման, ինչպես նաև պրոբացիայի ծառայության կադրերի ռեզերվի վերաբերյալ իրավակարգավորումներ: Առաջարկում ենք ապահովել Նախագծի 12-րդ գլխի վերնագրի և բովանդակության համապատասխանությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասում սահմանված | Ընդունվել է:<br>Նախագծի 12-րդ գլխի վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ *ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ, ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՂԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԵՎ* ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԸ | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պահանջը: | | |
| **28.** | ***Կառավարություն*** | Նախագծի 38-րդ հոդվածի 4-րդ մաս | Նախագծի 38-րդ հոդվածի 4-րդ մասը խնդրահարույց է «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի, այն է՝ «Արգելվում է կատարել՝ ( ) շարունակական հղումներ, երբ նորմը, որին հղում է կատարվում, իր հերթին հղում է կատարում մեկ այլ նորմի:», տեսանկյունից, քանի որ այն հղում է կատարում 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ մասին, որն էլ իր հերթին հղում է կատարում 41-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին:<br>Ուստի առաջարկում ենք կատարել լրամշակում՝ վերացնելով այդպիսի շարունակական հղումները: | Ընդունվել է:<br>Նախագծի 38-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| **29.** | ***Կառավարություն*** | Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մաս | Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «2. Պրոբացիայի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում նրա լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | (կասեցվել) օրենքով սահմանված դեպքերում և կարգով:»:<br>Նշված իրավակարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետևյալը.<br>Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածում սահմանված է պաշտոնավարման կասեցումը, որի համաձայն. «1. Պաշտոնավարման կասեցումը հանրային ծառայության մեջ գտնվող, ինչպես նաև աշխատանքային պայմանագրով աշխատող մեղադրյալի լիազորությունների իրականացման կամ աշխատանքային գործունեության ժամանակավոր ընդհատումն է:<br>2. Մեղադրյալի պաշտոնավարումը իրավասու մարմնի որոշմամբ կարող է կասեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ, պաշտոնավարումը շարունակելով, նա կխոչընդոտի քրեական վարույթին կամ կկատարի հանցանք:<br>3. Մեղադրյալի պաշտոնավարումը | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կասեցվում է համապատասխան որոշումը կայացնելու պահից: Պաշտոնավարման կասեցման մասին որոշումն անհապաղ ուղարկվում է մեղադրյալի աշխատավայրի վարչակազմ, իսկ դրա պատճենը հանձնվում է մեղադրյալին:»:<br>Այսպես՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում կիրառվող հասկացություններն՝ առաջարկում ենք Նախագծի 40-րդ հոդվածի 2-րդ մասում կիրառված «լիազորությունների ժամանակավորապես դադարեցում (կասեցում)» ձևակերպումը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում սահմանված հասկացություններին: | | |
| **30.** | ***Կառավարություն*** | Նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մաս | Նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Պրոբացիայի ծառայությունից ազատումը, սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան, | Ընդունվել է:<br>Նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կատարվում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքը լրանալուց հետո՝ հաջորդ ամսվա 1-ին, եթե պրոբացիայի ծառայողի ծառայության ժամկետը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով չի երկարաձգվել:»:<br>Վերոնշյալ դրույթում հղում է կատարվում Նախագծի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, որում նախատեսված է պրոբացիայի ծառայողի սահմանային տարիքը լրանալու կամ այն 5 տարի ժամկետով երկարաձգելուց հետո պրոբացիայի ծառայությունից ազատման հիմք ը: Մինչդեռ Նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը նախատեսում է պրոբացիայի ծառայողի միայն սահմանային տարիքը լրանալու դեպքում պաշտոնից ազատման ժամկետը: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել Նախագծի 41-րդ հոդվածի 3-րդ մասում Նախագծի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին կատարված հղումը: | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **31.** | ***Կառավարություն*** | | Նախագծի 14-րդ գլխին հաջորդում է 14-րդ գլուխ: Առաջարկում ենք ապահովել Նախագծի գլուխների համարակալման հաջորդականությունը | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն. | Ընդունվել է: |
| **32.** | ***Կառավարություն*** | | Նախագծի 46-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը առաջարկում ենք համապատասխանեցնել Նախագծի 45-րդ հոդվածին և «Ծառայությունից» բառից հետո ավելացնել «կամ պաշտոնից անհիմն կամ» բառերը, քանի որ Նախագծի 45-րդ հոդվածով նախատեսվում են ծառայության կամ պաշտոնի վերականգնման վերաբերյալ կարգավորումներ, իսկ Նախագծի 46-րդ հոդվածը միայն կարգավորում է Նախագծի 45-րդ հոդվածով սահմանված կարգով արդեն իսկ վերականգնված ծառայողի կոչումի շնորհման և ծառայության ժամկետի հաշվարկման ընթացակարգը: Ուստի անհրաժեշտ է պահպանել այդ նորմերի համապատասխանությունը մեկը մյուսին: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **33.** | ***Կառավարություն*** | Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մաս | Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ծառայությունից անօրինական ազատված, պաշտոնը կամ կոչումն իջեցված ծառայողներին մինչև դրանց վերականգնումն ընկած հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար տրվում է դրամական փոխհատուցում՝ նրան չվճարված միջին աշխատավարձի չափով՝ բացառությամբ կադրերի ռեզերվում գտնված ժամանակահատվածում ստացած վարձատրության:»:<br>Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ պարապուրդն այն իրավիճակն է, երբ աշխատողը չի իրականացնում իր աշխատանքային պարտականությունները՝ պայմանավորված որոշակի հանգամանքներով: Հարկադիր պարապուրդը այդ աշխատանքային պարտականությունների կատարման անհնարինությունն է՝ ոչ աշխատողի մեղքով առաջացած: Տվյալ դեպքում հարկադիր պարապուրդում կարող են գտնվել | Ընդունվել է:<br>Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվել են համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | միայն ծառայությունից անօրինական ազատված պրոբացիայի ծառայողները և նրանց նկատմամբ այս տերմինի կիրառումը ճիշտ է: Սակայն այն վերաբերելի չի կարող համարվել պաշտոնը կամ կոչումն իջեցված ծառայողներին, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը պաշտոնը կամ կոչումը իջեցված ծառայողների նախկին պաշտոնը կամ կոչումը վերականգնելիս հաշվարկում է աշխատավարձի տարբերությունը այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը տվյալ գործատուի մոտ կատարում էր նվազ վարձատրվող աշխատանք: Ուստի առաջարկում ենք նշված դիտարկման հիման վրա կատարել համապատասխան փոփոխությունները: | | |
| **34.** | ***Կառավարություն*** | Նախագծի 49-րդ հոդված | Նախագծի 49-րդ հոդվածի վերնագիրը, ձևակերպված լինելով հետևյալ կերպ՝ «Պատասխանատվության առանձնահատկությունները պրոբացիայի ծառայողի վարքագծի | Ընդունվել է:<br>Նախագծի 49-րդ հոդվածի վերնագիրը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում», ըստ էության, չի համապատասխանում հոդվածի բովանդակությանը, քանի որ վերջինս պարունակում է նորմեր ոչ թե պրոբացիայի ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու, շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում կիրառվող պատասխանատվության առանձնահատկությունների վերաբերյալ, այլ պրոբացիայի ծառայողների էթիկայի հանձնաժողովի ծառայողական քննության արդյունքով կայացված եզրակացության մասին:<br>Ուստի առաջարկում ենք Նախագծի 49-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը: | | |
| **35.** | ***Կառավարություն*** | Նախագծի 51-րդ հոդվածի 1-ին մաս | Նախագծի 51-րդ հոդվածի 1-ին մասում «կամ» բառից հետո առաջարկում ենք հանել «ծառայողական պարտականությունների կատարման կապակցությամբ» արտահայտությունը և այն ավելացնել նույն մասի «միջոցներ՝» բառից հետո, քանզի հակառակ դեպքում կբախվենք մի իրավիճակի, երբ պրոբացիայի ծառայողը հնարավորություն կունենա ֆիզիկական ուժ և հատուկ միջոցներ կիրառել իրեն ցույց տրված ցանկացած դիմադրության դեպքում: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **36.** | ***Կառավարություն*** | Նախագծի 52-րդ հոդված | Նախագծի 52-րդ հոդվածը պարունակում է երկու 4-րդ մաս: Առաջարկում ենք ապահովել Նախագծի 52-րդ հոդվածի մասերի համարակալման հաջորդականությունը: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **37.** | ***Կառավարություն*** | Նախագծի 15-րդ գլուխ | Նախագծի 15-րդ գլխի վերնագրում «ԵԶՐԱՓԱԿԻՉ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «ՄԱՍ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածում սահմանված նորմատիվ իրավական ակտի կառուցվածքը: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **38.** | ***Կառավարություն*** | Նախագծի 17-րդ հոդված | «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով վերապատրաստման գործընթացի ֆինանսավորման հետ կապված արդեն իսկ սահմանված է, որ այդ գործընթացն իրականացվում է պետական բյուջեի և օրենքով չարգելված միջոցների հաշվին, այդուհանդերձ, հաշվի առնելով նաև վերապատրաստման ծախսերի փոխհատուցման դեպքի ամրագրման փաստը, ինչպես նաև առավելագույն հստակություն ապահովելու նկատառումներից ելնելով, կարծում ենք, ավելորդ չի լինի Նախագծի 17-րդ հոդվածի վերջում նույնպես ամրագրել այդ դրույթը: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **39.** | ***Կառավարություն*** | Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս | Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պրոբացիայի ծառայությունում, որպես պրոբացիայի ծառայող, ծառայության կարող է անցնել Պրոբացիայի ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած, բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի, ինչպես նաև այն քաղաքացիների, որոնք օրենքով նախատեսված կարգով և հիմքով ազատվել են պարտադիր զինվորական ծառայությունից)»:»<br>Առաջարկում եմ վերոնշյալ դրույթից հանել «բարձրագույն կրթություն ունեցող» արտահայտությունը և ճկունության ապահովման տեսանկյունից բարձրագույն կրթություն ունենալու պահանջը պարտադիր լինել կամ չլինելու հարցը յուրաքանչյուր պաշտոնի | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համար նախատեսել Պրոբացիայի ծառայության համապատասխան պաշտոնի անձնագրով: Բացի այդ, նշված «բարձրագույն կրթություն ունեցող» արտահայտությունը հանվելու դեպքում վերոնշյալ դրույթն իր տրամաբանությամբ համահունչ կլինի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին», «Քրեակատարողական ծառայության մասին», ինչպես նաև «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքների համանման դրույթներին: | | |
| **40.** | ***Կառավարություն*** | Նախագծի 59-րդ հոդված | Առաջարկում ենք ծառայությունը մոտիվացված և ձեռնահաս կադրերով համալրելու նպատակով, ինչպես նաև այն առավել գրավիչ դարձնելու համար Արդարադատության նախարարի որոշմամբ նախատեսել որակավորման ստուգման արդյունքերով պաշտոնի նշակելու պահանջ: | Ընդունվել է:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **41.** | ***Կառավարություն*** | Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մաս | Նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասում առկա է վրիպակ, այն է՝ «ապահովման» բառը պետք է դարձնել «ապահովումն»: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| **42.** | ***Կառավարություն*** | Նախագծերի փաթեթի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ | Նախագծերի փաթեթի ուժի մեջ մտնելու ժամկետը անհրաժեշտ է նախատեսել 2024 թվականի հունվարի մեկը: | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |
| | ***«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*** | | | | |
| **43.** | ***Կառավարություն*** | Նախագծի 2-րդ հոդված | «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում «քրեակատարողական» բառից հետո լրացնել «,պրոբացիայի» բառը: Հարկ ենք | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համարում նշել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում «քրեակատարողական,» բառը ստորակետ կետադրական նշանով բացակայում է: Հետևաբար առաջարկում ենք վերանայել «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված լրացումը՝ «քրեակատարողական» բառից հետո դրված ստորակետը դնել «պրոբացիայի» բառից առաջ: | | |
| | ***«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ և ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*** | | | | |
| **44.** | ***Կառավարություն*** | Նախագծի 1-ին հոդված | «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «մարտի» բառն առաջարկում ենք փոխարինել «դեկտեմբերի» բառով՝ հիմք ընդունելով «Պետական | Ընդունվել է:<br><br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի ընդունման ամսաթիվը: | | |
| **45.** | ***Կառավարություն*** | Նախագծի 1-ին հոդվածում «ե)», 2-րդ հոդվածում կիրառված «բ)» ձևակերպումներ | «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «ե)» ձևակերպումն առաջարկում ենք փոխարինել «ե.» ձևակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված կանոնը, այն է. «Հոդվածում ենթակետի՝ հայերենի այբուբենի փոքրատառերով նշված համարները տեքստից բաժանվում են միջակետով:»:<br>Նույն դիտարկումը վերաբերելի է նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություններ: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | կիրառված «բ)» ձևակերպմանը: | | |
| **46.** | ***Կառավարություն*** | Նախագծի 6-րդ հոդված | «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվող լրացումը առաջարկում ենք կատարել նաև «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 16-րդ հոդվածի վերնագրում՝ «քրեակատարողական» բառից հետո լրացնելով «, պրոբացիայի» բառը, քանզի տվյալ հոդվածում կատարվող լրացման արդյունքում հոդվածի բովանդակային ծավալի ավելացումը հրամայական է նաև վերնագրում լրացում կատարելու և այն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին | Ընդունվել է:<br>Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխանեցնելու: | | |